Նահրյան Երկրների դեմ Թիգլաթպալասար I-ը ձեռնարկել է Երեք ռազմարշավ՝ «3-ըն առa KUR Na-i-ri DU»²³, որոնցից առաջինը Ք. ա. մոտ 1112 թ., Երկրորդը՝ Ք. ա.

¹⁸ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 65, արքան նշում է, որ որպեսզի ասորեստանյան մարտակառքերը կարողանային անարգել անցնել այդ լեռնային տարածքներում, հրամայել է պղնձե բրիչներով հարթեցնել տեղանքը:

¹⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 83.

²⁰ **Grayson.** 1987, A.0.78.23, l. 46.

²¹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 46.

²² **Diakonoff.** 1984, 6-8, 13-14, 42-45; հմնտ.՝ **Genç, MacGinnis.** 2023, 21; **Genç, MacGinnis.** 2022, 88.

²³ **Grayson.** 1991, A.0.87.4, l. 5; A.0.87.10, l. 17; A.0.87.13, l. 3; A.0.87.15, l. 10.

մոտ 1109 թ., Երրորդը՝ Ք. ա. մոտ 1106-1095 թթ.: Հարկ է նշել նաև, որ ասորեստանյան աղքաների արձանագրությունների հայտնի դիվանում²⁴, Թիգլաթպալասար I-ի ընդարձակ տարեգրությունները, որտեղ հիշատակվում է Նահրին, արձանագրվել են՝ A.0.87.1-ը Ք. ա. 1109 թ., A.0.87.2-ը Ք. ա. 1104 թ., իսկ A.0.87.3-ը՝ Ք. ա. 1094/92 թ.²⁵:

Արձանագրությունները նկարագրում են, թե ինչպես է Ասորեստանի արքան անցել դժվար տեղանքով և զաղթափ լեռներով: Նա ըստ Երևոյթին անցել է Բիթլիսի լեռնանցքով, հատել է Տավրոսի լեռնաշղթան, ապա դուրս եկել Վանա լճի ավազան: Թիգլաթպալասար I-ը պնդում է, որ Ք.ա. մոտ 1112 թ. իր Նահրյան առաջին ուազմարշավի ընթացքում ջախջախել է 23 Նահրյան թագավորների միությանը՝ «(IV, 90) ... Ես նրանց ուազմիկների դիակները ցորենի կույղերի պես փոեցի իրենց երկրում²⁶, լեռների հարթավայրերում և նրանց քաղաքների մերձակայքում: Ես գրավեցի (IV, 95) մարդում նրանց 120 մարդակառքերը՝ իրենց հանդերձանքով հանդերձ (և) Նահրի երկրների 60 թագավորների, այդ թվում՝ նրանց օգնության հասածներին, (IV, 100) Ես նեղասլաքով հեղապանեցի մինչև Վերին ծովը: Ես նվաճեցի նրանց մեծ քաղաքները (և) դուրս քերեցի (V, 1) նրանց ավարը, հարսկությունը (և) ունեցվածքը: Ես հրդեհի մարդնեցի, ավերեցի (և) հողին հավասարեցրի,

²⁴ Grayson. 1991.

²⁵ Shibata. 2023, 168.

²⁶ Տառացի նշվում է «բաց երկրում», ինչը հայերեն հնարավոր է թարգմանել նաև «բաց երկնքի դակ»:

նրանց քաղաքները (և) վերածեցի ավերակների բլուրների»²⁷:

Ասորեստանի արքան գերի ընկած նահրյան թագավորներին նրանց հպատակությունն ու տուրքը ընդունելուց հետո ազատ է արձակել²⁸: Նահրյան երկրներից նա հարկել է 1200 ձի և 2 հազար խոշոր եղջերավոր անասուն²⁹: Նահրյան թագավորների վերոնշյալ 23 թիվը, սակայն զգալիորեն ավելի քիչ է, քանզի քիչ անց արքան խոսում է նահրյան 60 թագավորների մասին³⁰: Այս ամենը կարող է ենթադրել, որ կա’մ առաջին բախումն իր աշխարհագրական տիրույթով ավելի սահմանափակ է եղել, կա’մ մեկ վճռական ճակատամարտով ասորեստանցիների առաջխաղումը կասեցնելու համար՝ նահրյան համադաշնությունն է միավորել իր ուժերը: Միայն այս կերպ կարելի է բացատրել 23 թվից հետո 60-ի հիշատակումը: Այստեղ մնում է համաձայնել, որ մնացած 37 թագավորները Նահրյան երկրների հիմնական 23 թագավորներին օգնության եկած դաշնակիցներն են³¹, որոնք, ըստ արձանագրության, նախապես տեղեկացված են եղել ու հնարավորություն են ունեցել ճակատամարտի համար պատրաստություններ տեսնել:

Բավականին հետաքրքիր է նաև դեպի Հայկական լեռնաշխարհ ու նրա մատուցներ արշավող ասորեստանյան

²⁷ **Grayson.** 1991, A.0.87.1.

²⁸ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 43- col. V, l. 21.

²⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. V, l. 19.

³⁰ **Grayson.** 1991, A.0.87.1, col. IV, l. 96; **Jakob.** 2017, 135.

³¹ **Արցունյան.** 1970, 43-44.

բանակի նկարագրությունը: Ակնհայտ է, որ մարտավարական տեսանկյունից՝ ասորեստանցիներն օգտագործել են բանակի գրեթե ողջ զինանոցը: Ճակատամարտերից զատ, տարեգրության մեջ խոսվում է նաև քաղաքների ու ամրոցների պաշարման մասին: Դրանից կարելի է ենթադրել, որ Նախյան համադաշնության դեմ արշավանքի ժամանակ ասորեստանցիները կիրառել են նաև պաշարողական մեթենաներ: Ասորեստանյան բանակում մեծ նշանակություն ունեին նաև մարտակառքերը «իմ մարդակառքերն ու բանակը պապրասպության մեջ դրեցի»³²: Այս գորատեսակը տարեգրությունների մեջ հաճախ է հիշատակվում, և ինչպես երևում է ասորեստանյան արքաների տեքստից՝ բավականին արդյունավետ է կիրառվել ճակատամարտերում: Սակայն, պետք է արձանագրել, որ Հայկական լեռնաշխարհի հարավյախն լեռնային հատվածները պետք է, որ սահմանափակեին մարտակառքերի ակտիվ տեղաշարժերն ու գործողությունները «...երբ ճանապարհը հարթ էր՝ կառուվ էի, և երբ ճանապարհը դժվար էր և հզոր լեռների խորդուրդը դեղանքով՝ ես ոդքով էի անցնում»³³: Բայց արձանագրված են նաև դեպքեր, երբ արքան թողել է մարտակառքերը և առաջ շարժվել. «Արումա լեռան վրա, դժվարին դեղանքում, որն անանցանելի էր իմ կառքերի համար, ես թողեցի կառքս: Վերցնելով իմ մարդիկներին՝ ես հաղթական սահում էի ... վրանգավոր լեռնաշղթաների

³² Grayson. 1991, A.0.87.1, col. I, l. 71.

³³ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 70-72.

երկայնքով»³⁴: Իսկ մեկ այլ տեղ՝ «Սուր դաշույնների պես դուրս ցցված բարձր սարերի մեջ, որոնք անանցանելի էին իմ կառքերի համար, ես կառքերը դրեցի (զինվորների) պարանոցին (և այսպես) անցա դժվարին լեռնաշղթայի միջով»³⁵:

Ենելով այն հանգամանքից, որ ասորեստանյան զինված ուժերի վերաբերյալ (և ոչ միայն) արքաների տարեգրություններում, որպես կանոն, հիմնականում «սրանդարդացված» արտահայտություններ են, դժվար է ասել Հայկական լեռնաշխարհ արշաված ռազմիկների ստույգ թիվը: Հետաքրքիր է նաև այն հանգամանքը, որ ըստ Թիգլաթպալասար I-ի տարեգրության, նա իր հետ ունեցել է 30 մարտակառք, որոնք սովորաբար ուղեկցում էին արքային՝ «*ina 30 GIŠ.GIGIR.MEŠ (išnarkabatī)-ia əlikēt idi gamarrija erjūte*»³⁶: Պնդելի է, որ Ասորեստանի արքան Հայկական լեռնաշխարհ արշավանքի ժամանակ իր հետ ունեցել է ոչ ավել քան 2-3 տասնյակ հազար զինվոր: Բավականին ուշագրավ է նաև այն հանգամանքը, որ Թիգլաթպալասար I-ը գրեթե միշտ շեշտում է ասորեստանցի զինվորի արհեստավարժությունն ու պատրաստվածությունը, որոնք իբր գրեթե միշտ վճռորոշ դեր են ունեցել ասորեստանցիների հաղթանակներում՝ «*qurādīja ša mit̄us dabdē litamdu - nyleber h̄m̄p̄t̄i t̄r̄j̄o i n̄n̄e r̄p̄t̄i*»³⁷:

³⁴ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 72-76.

³⁵ Grayson. 1991, A.0.87.1, col. III, ll. 43-46.

³⁶ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 64-66.

³⁷ Grayson. 1991, A.0.87.1, col. II, ll. 66-67.

Հայկական լեռնաշխարհից տարված ավարի վերաբերյալ Թիգլաթպալասար I-ը նշում է նաև, որ Ադադ աստծոն *hamru*-տաճարի համար Նահրիի Երկրների լեռներից տարել է օբսիդիան, *haltu*-քար (ըստ Երևույթին ալունիտ³⁸) և հեմատիտ³⁹:

Նահրիյան Երկրների զբաղեցրած տարածքը ռազմավարական մեծ նշանակություն ուներ ասորեստանցիների համար. 1) Հայկական լեռնաշխարհը հարուստ է արժեքավոր բնական օգտակար հանածոներով, մասնավորապես՝ մետաղներով (պղինձ, անագ, երկաթ և այլն), հրաբխային ծագման բազում ապարներով, փայտանյութերով, խոշոր եղջերավոր անասուններով, ձիերով, և այլն⁴⁰: 2) Հայկական լեռնաշխարհի հարավային լեռնանցքները⁴¹ ծառայել են որպես Ասորեստան ներխուժման հնարավոր ուղիներ: Ուստի, այդ լեռնանցքների վերահսկողությունը Ասորեստանի համար դառնում էր անվտանգության առաջնահերթություն: 3) Տեղական կառավարիչների նկատմամբ գերիշխանության ամրագրմամբ և նրանց վասալական կախման մեջ գցելով: 4) Թագավորական պատանդներ վերցնել՝ շարունակական հավատարմությունն ապահովելու համար: 5) Զանգվածային տեղահանությունների արդյունքում մարդկային ռեսուրսների ծեռք քերում և նրանց վերաբնակեցում Ասորեստանում: 6) Հաղթական կոթողի կանգնեցումը ի փաստումն Ասորեստանի ազդեցության հյուսի-

³⁸ **Bobokhyan.** 2008, 115; **Faist.** 2001, 43-46.

³⁹ **Grayson.** 1991, A.0.87.1, col. VIII, ll. 11-16.

⁴⁰ **Bobokhyan.** 2008, 114-115, 145-146; **Faist.** 2001, 30, 43-46, 63, 67-68.

⁴¹ **Radner.** 2009; **Sargsyan.** 2022.

սարևմտյան սահմանի⁴²:

Եզրակացություններ

Զարգացնելով իր առաջխաղացումը հյուսիսում՝ Թիգ-լաթպալասար 1-ը շարժվեց դեպի Եփրատյան գոտի: Նա Խաթթիում գտնվող Կարքեմիշ քաղաքի մոտ բախվեց արամեական ախլամու կոչվող ցեղերի հետ⁴³, իսկ Ք.ա. մոտ 1107 թ. Ասորեստանի արքան արշավեց Իշուվայի դեմ և գրավեց նրանց քաղաքները, որոնք արծվի բների պես կառուցված էին լեռների գագաթներին: Նա գրավեց, կողոպտեց և ավերեց Իշուվայի 25 քաղաք: Եվ գրեթե ինչպես միշտ, արշավանքի պատճառը Իշուվայի անհնազանդությունն էր: Ապա և շարժվեց դեպի Թարալ:

Թիգլաթպալասար 1-ի հյուսիսային տարածքների վրա արշավանքներն իրականում էպիգրաֆային բնույթ ունեին, իսկ դրանցում ասորեստանցիների վերահսկողությունը՝ համեմատարար կարճատև էր: Սակայն այն նշանակալից էր ասորեստանյան ծավալապաշտական գաղափարախոսության տեսանկյունից: Այս արշավանքները, փաստացի ծառայում էին մի քանի համընկնող նպատակների՝ ապահովելով անհրաժեշտ հանածոների ու այլ ռեսուրսների հասանելիությունը, դրանք ստեղծում էին բուժերային գոտի՝ պաշտպանելով Ասորեստանի կենտրոնը և ամրացնելով արքայի կերպարը՝ որպես աստվածների սիրելիի, նրանց կամքը կատարողի և նրանց կողմից արտոնված նվաճողի:

⁴² Sargsyan. 2022.

⁴³ Graysong. 1991, A.0.87.1, col. V, ll. 44-98.

Գրականություն/References/Литература

1. **Ցականյան Ռ.** 2018, Միջին Ասորեստանյան տերության արտաքին և ներքին քաղաքականության որոշ հարցերի շուրջ, ԳԱԱ ԱԻ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան, հ. XXXI, էջ 19-33:
Tsakanyan R. 2018, On Some Foreign and Domestic Policy Issues of Middle Assyrian Empire, Institute of Oriental Studies NAS RA, The Countries and Peoples of the Near and Middle East, Yerevan, № XXXI, pp. 19-33.
2. **Ցականյան Ռ.** 2023, Աշուրի պետությունը մ.թ.ա. III հազարամյակի սկզբներից մինչև մ.թ.ա. XV դարի վերջերը, ԳԱԱ ՇՀՀ կենտրոնի «Գիտական աշխատություններ», Գյումրի, № 2 (27), էջ 5-22:
Tsakanyan R. 2023, The State of Aššur from the Beginning of the 3rd Millennium BC to the End of the 15th Century BC., The Shirak Center for Armenological Studies of NAS RA, "Scientific Works", № 2 (27), pp. 5-22.
3. **Ցականյան Ռ.** 2023, Ասորեստանի արքա Թուկուլտի-Նինուրտա I-ի (մ.թ.ա. 1242-1206 թթ.) նահիյան արշավանքը, «Լրաբեր հասարակական գիտությունների», № 2, էջ 157-175:
Tsakanyan R. 2023, The Nairian Campaign of the Assyrian King Tukulti-Ninurta I (1242-1206 BC)), "The Herald of Social Sciences", № 2, էջ 157-175.
4. **Քոսյան Ա.** 1999, Մ.թ.ա. XII դարի Մերձավորարևելյան ճգնաժամը և Հայկական լեռնաշխարհը, Երևան, Զանգակ-97, 264 էջ:
Kosyan A. 1999, The XII Century B.C. Near Eastern Crisis and the Armenian Highland, Yerevan, Zangak-97, 264 p.

5. **Քոսյան Ա.** 2022, Խեթական թագավորություն (քաղաքական պատմություն), Երևան, «ՀԱԱ Արևելագիտության ինստիտուտի հրատ.», 252 էջ:
Kosyan A. 2022, The Hittite Kingdom (Political history), Yerevan, Institute of Oriental Studies NAS RA, 252 էջ.
6. **Քոսյան Ա., Գրեկյան Ե.** 2024, Հայկական լեռնաշխարհի միջավայրային պատմությունը. շրջակա միջավայր, կլիմայական փոփոխություններ և քաղաքակրթական գործընթացներ (Ք.ա. X-I հազարամյակներ), Երևան, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի հրատ., 408 էջ:
Kosyan A. Grekyan E. 2024, The Environmental History of the Armenian Highland: Natural Environment, Climate Changes, and Civilizational Processes (X-I Millennia BC)), Yerevan, Institute of Archaeology and Ethnography, 408 p.
7. **Арутюнян Н.** 1970, Биайнили (Урарту). Военно-политическая история и вопросы топонимики, Ереван, изд. Академии наук Армянской ССР, 474 с.
Harutyunyan N. 1970, Biainili-Urartu the History of Wars and Politics, and Questions of Place-Name Studies, Yerevan, National Academy of Sciences, 474 p.
8. **Bobokhyan A.** 2008, Kommunikation und Austausch im Hochland zwischen Kaukasus und Taurus, ca. 2500-1500 v. Chr., Bd. 1-2, Oxford: Hedges, 674 P.
9. **Bryce T.** 2012, The World of the Neo-Hittite Kingdoms: A Political and Military History, Oxford: Oxford University Press, XIII+356 P.
10. **Diakonoff I.** 1984, The Pre-history of the Armenian People, Delmar, New York, 241 P.
11. **Faist B.** 2001, Der Fernhandel des assyrischen Reiches zwischen dem 14. und 11. Jahrhundert v. Chr. (AOAT

- 265), Ugarit-Verlag, Münster, xxii + 322 P.
12. **Genç B., MacGinnis J.** 2022, A Text of Shalmaneser I from Üçtepe and the Locaion of Šinamu, *Anatolian Studies*, vol. 72, pp. 79-95.
 13. **Genç B., MacGinnis J.** 2023, The Assyrian Rock Relief at Yağmur (Evrihan) in the Tur Abdin, Oxford, Archaeopress, Pp. iii+46.
 14. **Grayson A. K.** 1987, The Assyrian Rulers of the Third and Second Millennium BC (to 1115 BC), *The Royal Inscriptions of Mesopotamia Assyrian Periods*, Vol. I, Toronto-Buffalo-London. XXII+355 P.
 15. **Grayson A. K.** 1991, Assyrian Rulers of the Third and Second Millennia BC I (1114-859 BC), *Royal Inscriptions of Mesopotamia: Assyrian Periods* 2, Toronto, Buffalo and London: University of Toronto Press, XXII + 425 P.
 16. **Jakob S.** 2017, The Middle Assyrian Period (14th to 11th Century BCE), In Frahm, E. (ed.), *A Companion to Assyria*. Malden, MA: Wiley-Blackwell, pp. 117-142.
 17. **Kosyan A.** 1997, The Mushki Problem Reconsidered, *Studi Micenei ed Egeo-Anatolici*, vol. 39, issue 2, pp. 253-266.
 18. **Kosyan A.** 2023, Migrations in the Armenian Highland (the Mushki Problem), *Fundamental Armenology*, № 1 (17), pp. 20-35.
 19. **Liverani M.** 2013, *The Ancient Near East: History, Society and Economy*, Routledge, 648 p.
 20. **Mayer W.** 1995, *Politik und Kriegskunst der Assyrer*, Münster, Ugarit-Verlag, XV+ 545 pp., Faltkarte.
 21. **Radner K.** 2006, How to Reach the Upper Tigris: The Route Through the Ḥūr ‘Abdīn, *State Archives of Assyria Bulletin*, vol. 15, pp. 273-305.
 22. **Radner K.** 2009, Die assyrischen Reliefs und Inschriften, in: Schachner A. (ed.), *Assyriens Könige an einer der*

- Quellen des Tigris. Archäologische Forschungen im Höhlensystem von Birkleyn und am sogenannten Tigris-Tunnel, Istanbuler Forschungen, Bd. 51, Tübingen, Ernst Wasmuth Verlag, pp. 172-223.
- 23. **Reculeau H.** 2022, Assyria in the Late Bronze Age, The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 3: From the Hyksos to the Late Second Millennium BC. Oxford, pp. 707-800.
 - 24. **Salvini M.** 1998, Nairi, Reallexikon der Assyriologie und Vorderasiatischen Archäologie, Band 9, Walter de Gruyter, Berlin-New York, pp. 87-91.
 - 25. **Sargsyan V.** 2022, C. F. Lehmann-Haupt's Studies on Assyrian Inscriptions of the Armenian Highland, Bulletin of the Institute of Oriental Studies, № 2/1, pp. 13-21.
 - 26. **Shibata D.** 2023, Assyria from Tiglath-pileser I to Ashurnasirpal II, The Oxford History of the Ancient Near East, Editors: Radner K., Moeller N. and Potts D. T., Volume 4: The Age of Assyria. Oxford, pp. 161-351.
 - 27. **Tsakanyan R.** 2023, The Nairian Campaign of Tukulti-Ninurta I (1242-126 BC) in the Context of the Conquests in the First Three Years of his Reign, Journal of Ancient History and Archaeology, № 10/1, pp. 5-9.
 - 28. **Wittke A.-M.** 2004, Mušker und Phryger. Ein Beitrag zur Geschichte Anatoliens vom 12. bis zum 7. Jh. v. Chr. (= Beihefte zum Tübinger Atlas des Vorderen Orients B Geisteswissenschaften 99). Wiesbaden: Reichert, xvi+389 S., 2 Kt.

**Руслан А. Цаканян, Институт Востоковедения НАН РА,
к.и.н., Северные походы Тиглатпаласара I: цели и результаты**

Резюме

В период правления Тиглатпаласара (Tukultī-apil-Ešarra) I (1114–1076 гг. до н. э.), одного из последних могущественных царей Среднеассирийского государства (ок. последней четверти XV в. до н. э. — первой половины X в. до н. э.), безопасность его северных и северо-западных границ имела для государства большое стратегическое значение. В результате анализа клинописных источников предпринята попытка реконструировать стратегические и экономические цели его походов на Армянское нагорье и в восточную часть Малой Азии, а также раскрыть их историческое значение. Северные походы Тиглатпаласара I представляли собой продуманную завоевательную стратегию, направленную на обеспечение торговых путей, доступа к ценным ресурсам и установление господства Ассирии над малыми и средними государствами региона.

Ключевые слова: Средняя Ассирия, Тиглатпаласар I, Армянское нагорье, Верхний Евфрат, военный поход, Наири, мушки.

**Ruslan A. Tsakanyan, Institute of Oriental Studies NAS RA,
Ph.D in History, The Northern Campaigns of Tiglath-Pileser I:
Objectives and Results**

Summary

During the reign of Tiglath-Pileser (Tukultī-apil-Ešarra) I (1114–1076 BC), one of the last powerful kings of the Middle Assyrian Empire (c. the last quarter of the 15th century BC – the first half of the 10th century BC), the security of its northern and northwestern borders was of

great strategic importance to the state. An analysis of cuneiform sources has made it possible to reconstruct the strategic and economic goals of his campaigns in the Armenian Highlands and in eastern Asia Minor, as well as to reveal their historical significance. The northern campaigns of Tiglath-Pileser I were a well-thought-out strategy of conquest aimed at securing trade routes, access to valuable resources, and establishing Assyria's dominance over the small and medium-sized states of the region.

Key words: Middle Assyri, Tiglath-pileser I, Armenian Highland, Upper Euphrates, military campaigns, Nairi, Mushki.

ԱՐՏԱՇԵՍ Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., դրցենք

artashesshahnazaryan.1950@gmail.com

ID 0009-0006-7000-5335

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-46

ԶԱՔԱՐՅԱՆՆԵՐԻ ԵՎ ԱՐՑԱԽԻ ԻՇԽԱՆԱՏՈՂՄԵՐԻ

ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

(XII Դ. ՎԵՐՁԻՆ ՔԱՌՈՐԴ - XIII Դ. ԱՌԱՋԻՆ ԿԵՍ) *

Ամփոփում

XII դ. վերջերին վրաց Բագրատունիների հովանավորությամբ և Զաքարյանների առաջնորդությամբ սելցուկյան տիրապետության դեմ հայ ժողովրդի սկսած շուրջ քառասուն տարվա ընթացք ունեցող ազատագրական պատերազմը դրական արդյունքներ արձանագրեց: Երկրի կենտրոնական, հյուսիսային ու հյուսիսարևելյան գավառների մեծ մասն ազատագրվեց: Իրենց գոյությունը մի կերպ պահպանած իշխանատումները, բարենպաստ պայմանների շնորհիվ, վերելք ապրեցին, իսկ նրանց իշխանությունները հզորացան, ինչում Զաքարյանների դերը մեծ էր:

Դրանցից որոշակի առումով առանձնանում են 1182 թ. Արցախի ամբողջական իշխանության մասնատման արգասիք Հաթերքի կամ Վերին Խաչենի, Ծարի ու Ներքին

* Ներկայացվել է 21.V.2025 թ., գրախոսվել է 27.V.2025 թ., ընդունվել է դրագրության 20.VI.2025 թ.:

Խաչենի իշխանությունները: Զաքարյանները վերջին երկուահ իշխանատոհմերի հետ հաստատել էին խնամիական կապեր: Սակայն նրանց հետ Զաքարյանների փոխհարաբերությունները նույնական չեն: Եթե Ծարի իշխանատոհմը, Զաքարյանների ստորական լինելու պատճառով, նրանց հետ ուղղահայաց փոխհարաբերություններ ուներ, ապա Ներքին Խաչենի իշխանատոհմը՝ հորիզոնական, քանի որ Զաքարյանները նրան գերակա չեն:

Վերջին իրողությունից բխում է, որ Ներքին Խաչենի իշխանությունը Վրացական թագավորության մաս կազմող և Զաքարյանների գլխավորությամբ ավատատիրական իշխանությունների ցանց հանդիսացող Զաքարյան Հայաստանի մաս չի եղել:

Բանալի բառեր՝ Արցախ, Զաքարյաններ, Իվանե Ա, Դոփի, Ծար, Հասան-Զալալ, Խորիշահ:

Ներածություն

Զաքարյանների ու Արցախի իշխանատոհմերի փոխհարաբերությունները դիտարկվող ժամանակահատվածի հայոց պատմության ուշագրավ էջերից են: Դրանց վերհանումն օգնում է հնարավորինս ամբողջական ու պատմական իրողություններին համապատասխան պատկերացում կազմելու գարգացած ավատատիրության շրջանի երկրորդ փուլի Հայաստանի այդ նշանավոր հայկական իշխանատոհմերի փոխհարաբերությունների մասին: Քննվող հիմնահարցի մասին ժամանակի հայկական գրչագիր ու վիմագիր և օտար որոշ սկզբնաղբյուրներում պահպանված

տեղեկությունները հարուստ չինելով հանդերձ դա թույլ են տալիս: Նաև նպաստում են պարզելու Զաքարյան Հայաստանի՝ Զաքարյանների գլխավորած ավատատիրական աստիճանակարգում Արցախի իշխանատումների՝ ներկայացվածության և նրանց իշխանությունների՝ Զաքարյան Հայաստանի կազմում ընդգրկվածության հարցերը:

Աղրբեջանի կողմից Արցախի բռնազավթումից ու հայագրկումից հետո աղրբեջանականացվում է ոչ միայն ի բնե հայկական այդ երկրամասը, այլև սեփականացվում է նրա պատմությունը՝ հոչակելով աղվանական=աղրբեջանական: Հետևաբար, Արցախի պատմության ցանկացած դրվագի անաշառ քննությունն ունի ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն: Առավել ևս, որ Աղրբեջանում պետական մակարդակով Արցախի պատմության խորացող նենգափոխումն ունի մեկդարյա պատմության:

Վերոգրյալով պայմանավորված, Արցախի պատմության տարբեր շրջաններ, դրվագներ ու հիմախնդիրներ մշտապես գտնվել են հայ պատմագիտության ուշադրության կենտրոնում: Դրանցից է նաև սույն հոդվածի քննության առարկան, որին այս կամ այն չափով, հիմնականում թոռուցիկ, անդրադարձել են Հ. Մանանյանը, Լ. Բաբայանը և, հատկապես, Բ. Ովուբաբյանն ու Ա. Հակոբյանը: Սակայն Զաքարյանների և Արցախի իշխանատումների փոխհարաբերությունները հոդվածային հատուկ քննության առարկա չեն դարձել և իրենց ամբողջության մեջ չեն քննվել: Բացի այդ, նշված հեղինակների որոշ դիտարկումները կարոտ են սրբագրման ու լրացման, ինչը

կփորձենք անել:

Արցախը XII դ. վերջերին և Զաքարյանների ու նրա իշխանատոհմերի փոխհարաբերությունների հաստատումը

Հայոց Արևելից կողմանքում X դ. ստեղծված հայկական փոքրիկ թագավորություններն անկարող լինելով դիմակայել սելջուկյան գնալով ահագնացող ճնշմանը, մինչև XI դ. վերջին քառորդը հաջորդաբար լքեցին պատմության ասպարեզը: Այդուհանդերձ, «ի տարբերություն օր. Փառիսոսի, Խաչենի (=Արցախի- Ա. Շ.) արքայական տոհմը, ըստ ամենայնի, գոյատևել է թեկուզ բաժանված մանր տիրությունների»¹:

Արցախի իշխանությունները նախ համառորեն պայքարում էին Գանձակի ամիրության, ապա 1136 թ. նրան փոխարինած և մինչև 1225 թ. գոյություն ունեցած Գանձակի Ելտկուզյան աթաբեկության դեմ: Այդ իրողությանը 1182 թ. Դադիվանքում կանգնեցրած Խաչքարի հակառակ երեսին թողած վիմագրում փաստել է Խաչենի իշխանապետ Հասան Կրոնավորյալը: Նա մասնավորապես նշել է, որ իր ավագության, այսինքն, իշխանապետության 40 տարում՝ 1142 թ. սկսած շատ է պատերազմել և աստծո օգնությամբ հաղթել իր թշնամիներին²:

Նույն վիմագրում Հասան Կրոնավորյալը նշել է, որ այդ թվականին իր բերդերն ու գավառները հանձնել է որդինե-

¹ Յակոբեան. 2020, 293:

² Դիվան հայ վիմագրության. 1982, 198:

րին և կրոնավորելու նպատակով մտել վանք, այսինքն Դադիվանք ու կանգնեցրել սույն վիմագիր խաչքարը³: Նույն վանքում այդ թվականին իր կանգնեցրած խաչքարի վրա թողած արձանագրության մեջ նրան կրկնորդել է կի-նը՝ Մածնաբերդի տեր Կյուրիկի Բ-ի դուստր Մաման (Մամ-քանը)⁴: Ուշագրավ է, որ իր արքայական ծագումը շեշտելը չմոռանալով իրեն թագուհի հորջորջած Մաման չի զլացել շեշտել, որ ամուսնու հետ 30 տարի ավագություն է վարել. «կացար յաւագութեան յամս: Լ:»⁵:

Սակայն ընդամենը հինգ տարի անց՝ 1187-ին, Խոսրով Գանձակեցու վկայաբանության մեջ Մխիթար Գոշի հայտնածից հետևում է, որ Արցախում, ինչպես Հ. Մանանյանն է բնութագրել. «անիշխանություն» էր տիրում⁶: Մխիթար Գոշի համաձայն «ի ժամանակս բռնակալութեան (Ե) ղեմացուց, յորում վաղ ուրեմն բարձեալ էր թագաւորութիւնն Հայոց իսպառապուռ և անտերունչք շրջէին մնացորդը իշխանաց, որ ընդ բնաւ աշխարհս վատատե(ա)լը, ոչ հնագանդելով միմեանց, մանաւանդ այնոքիկ, որ բնակեալ էին յամուրս աշխարհին Արցախայ... Ոչ գոյ ի ժամանակի յայսմիկ առաջնորդ որ հովուէ»⁷:

Ծատ չանցած Արցախում ևս անիշխանական վիճակը վերացավ: Դրան հատկապես նպաստեցին Գանձակի

³Դիվան հայ վիմագրության. 1982, 198:

⁴Դիվան հայ վիմագրության. 1982, 215:

⁵Դիվան հայ վիմագրության. 1982, 215:

⁶ **Մանանյան.** 1952, 119:

⁷ Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը. 1896, 590-591:

Ելտկության աթարեկության դեմ Զաքարյանների գլխավորած հաղթական մարտերի շնորհիվ նրա տիրապետության տակ գտնվող հայկական հողերի (այդ թվում և Արցախում) ազատագրումն ու նրա թուղացումը: Դրա շնորհիվ Արցախի իշխանությունների վերելքի պայմաններ ստեղծվեցին: Արցախի որոշ իշխանատոհմերի հետ Զաքարյանների խնամիական կապերի հաստատումը ևս իր դրական դերը խաղաց:

Դրանում այդ ժամանակ Զաքարյանների տոհմավագ մեծ Սարգսի դերը դժվար է գերագնահատել: Ժամանակի թե՛ հայտնի, և թե՛ նոր բարձրացող իշխանատոհմերի հետ խնամիական կապերի հաստատումը նա իրավացիորեն համարում էր Զաքարյանների դիրքերի ամրապնդմանն ու ազդեցության տարածմանը նպաստող միջոցներից մեկը: Զաքարյանների հետ խնամիանալով նոյնին էին ձգտում նաև Արցախի իշխանատոհմերը:

Մեծ Սարգսին իր հինգ դուստրերից Վանենուն (Նանա) կնության էր տվել Մածնաբերդի տեր Աբաս Կյուրիկյանին: Սակայն նա երկու տարի անց⁸ 1176-ին, վախճանվեց⁹: Ինչ վերաբերում է նրա Արցախ հարս գնացած դուստրերին, ապա նրանցից Խորիշակը դարձել էր Ներքին Խաչենի իշխան Վախտանգ Տանգիկի կինը, իսկ Դոփիը՝ Ծարի իշխանատոհմից Հասան Ա Ծարեցու:

Իր կրտսեր եղբայր Վահրամի մահվանից հետո նրա որդիներին խնամակալող մեծ Սարգսիը նրանցից ավա-

⁸ **Գանձակեցի.** 1961, 152:

⁹ Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբէլեանի. 1942, 19:

գին՝ Բլուզ Զաքարեին, ամուսնացրել էր Արցախի ոչ անհայտ Դեսոմյան իշխանատոհմին պատկանող Հասանի դուստր Խաթունի հետ:

Այդ մասին տեղեկանում ենք Հաղբատի Խաթունաշեն Սուլր Աստվածածին Եկեղեցու արևելյան պատին Խաթունի թողած 1204-1216 միջակայքով թվագրվող¹⁰ արձանագրությունից: Ըստ դրա, Խաթունն այդ Եկեղեցին կառուցել է ի հիշատակ ամուսնանալիս Արցախից իր հետ ինչ-ինչ պատճառով Եկած Եղբայրների՝ «առ դուն կաթողիկեհս, հուղարկավորված Սենեքերիմի ու Սևադայի¹¹»: Թերևս Ենթադրելի է, որ նրանց Բլուզ Զաքարեին ապավինել է դրդել Արցախում անապահով վիճակում գտնվելը:

Կոպիտ հաշվարկներով, այն է՝ Ելնելով Աբաս Կյուրիկյանի հետ Վանենու 1174 թ. ամուսնանալու և մեծ Սարգսի 1187 թ. վախճանվելու մասին¹² առկա հավաստի տվյալներից, նաև Արցախի իշխանատոհմերի հետ Զաքարյանների խնամիական կապերի, այսինքն, փոխհարաբերությունների հաստատումը կարելի է թվագրել 1170-ական թվականներով:

Զաքարյանների հետ սերտ փոխհարաբերություններ էր հաստատել նաև Վասակ իշխանի գլխավորությամբ XIIդ. վերջերին Խաչենից Վայոց Զորում հաստատված Խաղբակյան իշխանատոհմի ավագ ճյուղը: Նրա «կրտսեր տոհմաճյուղը մնացել է Խաչենում և գտնվել Հասան-Զա-

¹⁰ Շահնազարյան. 1990, 68:

¹¹ Դիվան հայ վիմագրության. 2012, 208:

¹² Դիվան հայ վիմագրության. 2012, 108:

լայսանների քաղաքական ազդեցության ոլորտում»¹³:

Զաքարյանների ու Արցախի իշխանատոհմերի փոխ- հարաբերությունները XIII դ. առաջին կեսին

Մինչև XIII դ. երկրորդ տասնամյակի սկզբներն Արցախի իշխանատոհմերի ու Զաքարյանների փոխհարաբերությունների մասին ինչպես գրչագիր, այնպես էլ վիմագիր սկզբնադրյուրներում տեղեկություններ չեն պահպանվել:

Վախտանգ Տանգիկի ու Խորիշահի պատվերով 1212-1214 թթ. միջակայքում ընդօրինակված Ավետարանի գրիչը հիշատակարանում հայտնել է նրանցից առաջինի՝ Վախտանգի թոռ և Հասանի որդի, իսկ երկրորդի՝ «դուստր մեծ սպարապետին Սարգսի» լինելը¹⁴: Սակայն Վախտանգ Տանգիկը բավարարվել է լոկ Խորիշահի՝ իր լծակիցը, զուգակիցը լինելը փաստելով¹⁵, հարկ չհամարելով հայտնել, որ նա մեծ Սարգսի դուստրն է:

Փոխարենը, Խորիշահը Մեծրանից Սուրբ Հակոբա վանքի արևմտյան եկեղեցու 1214 թվակիր արձանագրության մեջ հայտնում է, որ ինքը Խաչենի տեր Վախտանգի կինն է, մեծ Սարգսի դուստրը և Զաքարեի ու Իվանեի քոյրը¹⁶: Ընդ որում, Խորիշահը որոշներից երկուայն կոչել էր իր եղբայրների անուններով¹⁷, ինչն ամուսնու առարկությա-

¹³Սարգարյան. 2023, 234:

¹⁴Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 94:

¹⁵Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 94:

¹⁶Դիվան հայ վիմագրության. 1982, 12:

¹⁷Դիվան հայ վիմագրության. 1982, 40:

նը չէր հանդիպել:

Վախտանգ Տանգիկը 1214-ին վախճանվեց և Նեղքին Խաչենի իշխան դարձավ նրա ավագ որդին՝ պապի անունը կրող Հասան-Զալալը: Վախտանգ Տանգիկի մահվան մասին հայտնած Վարդան Վարդապետը, փաստելով նրա մեծ Սարգսի փեսան լինելը, սիսալմամբ նշել է, որ նա թողել է «երկու տղայս, զՀասան, որ և ի գգուանաց Զալալոյա, և Զաքարէ» որ և Նասրադօլա»¹⁸: Ապա հավելել է. «զորս խնամարկէր հւանէ մարբն իրեանց Խորիշահիւ»¹⁹: Վարդան Վարդապետի այս վկայության հիմամբ Հ. Օրբելին նկատել է, որ Վախտանգի մահից հետո «Իվանեն իր քոյր Խորիշահի հետ դաստիարակում էր և նրա որդիներ Զաքարեին ու Հասանին»²⁰:

Անդրադառնալով Հ. Օրբելու այս դիտարկմանը, Բ. Ուլուբարյանը գտել է, որ պատմիչի խոսքերն այդպես չպետք է հասկանալ, պատճառաբանելով, որ «նախ «խնամարկել» նշանակում է ոչ թե «դաստիարակել», այլ հոգալ, իսկ տվյալ դեպքում՝ հովանի լինել»²¹: Ապա համոզմունք է հայտնել, որ Վարդան Վարդապետի այս «տեղեկությունն այնքան էլ վստահելի չէ» թեկուզ այն պատճառով, որ նա Վախտանգի որդիներից հիշատակում է միայն երկուսին²²:

Որ պատմիչը Վախտանգի չորս որդիների թիվը ճիշտ

¹⁸Հաւաքումն պատմութեան. 1862, 140:

¹⁹Հաւաքումն պատմութեան. 1862, 140:

²⁰Օրծելու. 1963, 149.

²¹Ուլուբարյան. 1975, 173:

²²Ուլուբարյան. 1975, 173:

չի ներկայացրել, անվիճելի է: Սակայն նա «խնամարկել» բառը, որ նշանակում է «խնամ ածել կամ տանել, ունել, խնամել»²³, հենց այդ և ոչ թե «դաստիարակել» իմաստով է օգտագործել, ինչպես ներկայացրել է Հ. Օրբելին: Ուստի, Վախտանգ Տանգիկի ու Խորիշահի որդիների թվի հարցում Վարդան վարդապետի վրիպումը նրա ամբողջ վկայությունը կասկածի տակ լինելու հիմք չպետք է դառնա: Ի դեպ, Հ. Օրբելին քիչ անց հվանե Ա-ին Հասան – Զալալի ոչ թե դաստիարակ, այլ խնամակալ է համարել»²⁴:

Քեռու կողմից խնամակալվելով հանդեճ, Արցախի իր ժամանակի ամենահզոր ու նշանավոր իշխան և ժամանակակիցների կողմից արքա, թագավոր հոչակված Հասան – Զալալը, ի տարբերություն իր մորաքույր Դոփի ժառանգների, փաստորեն խուսափել է Զաքարյանների հետ մայրական գծով իր ազգակցությունը շեշտելուց: Եվ դա այն դեպքում, երբ անգամ ան-Նասիվին Հասան Զալալի հետ կապված 1227 թ. իրադարձություններին անդրադառնալիս նրա անձը կարևորելու միտումով շեշտել է, որ նա հվանե ալՔուրզիի, այսինքն, հվանե Ա Զաքարյանի քրոջ որդին է²⁵:

Թե որն էր Զաքարյանների հետ իր ազգակցական կապը Հասան-Զալալի՝ փաստորեն լրության մատնելու պատճառը, դժվար է ասել: Այդ հանգամանքը թերևս կարելի է բացատրել հետևյալով. Վարդան վարդապետի վկայությամբ, 1214թ. «զՀաքերք յիվանե տուին տիարք նորա, զի

²³Նոր բառագիրք Հայկագեան լեզուի. 1979, 950:

²⁴Օրծելի. 1963, 150.

²⁵ Ին - Նասիվ. 1973, 211.

մեռավ Վաղթանգ բուն տէր նորա և որդիք իւր տարածամ»²⁶: Դժվար չէ կոսիել, որ սա կատարվել է ոչ առանց իվանե Ա-ի ճնշման, քանզի դրա շնորհիվ նա «ընդհուպ մոտեցավ իր քեռորդիների... Դոփյանների ու Ներքին Խաչենի իշխան Հասան-Զալալի կալվածքների սահմաններին»²⁷:

Իվանե Ա-ն Հաթերքի կամ Վերին Խաչենի Վախտանգ իշխանի տիրույթներն իր իշխանությանը կցելու փոխարեն հանձնեց Դոփի սերունդ Դոփյաններին, դրանք միացնելով նրանց Ծարի իշխանությանը: Եվ դա այն դեպքում, երբ Հաթերքի իշխանությունը սահմանակից էր Ծարի ու Ներքին Խաչենի իշխանություններին և թվում է, թե արդարացի կլիներ նրա տարածքը վերջիններիս միջև բաժանել: Առավել ևս, որ ինչպես ստորև կտեսնենք, Հասան-Զալալը հավակնություններ ուներ Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանությունում գտնվող Չարաբերդի (Ջրաբերդ), Կարկառի ու Ականայի նկատմամբ²⁸:

Բ. Ովուբաբյանի կարծիքով, Իվանե Ա-ն հովանավորում ու ամեն տեսակ օժանդակում էր Դոփին և «Ծարա իշխանության համար ստեղծում... մի տեսակ արտոնյալ վիճակ Արևելյան Հայաստանի մանր իշխանությունների շարքում»²⁹: Սակայն արդեն տեսանք, որ նա աջակցում էր նաև այրիացած Խորիշահին, խնամակալելով նրա որբացած

²⁶Հայաքոն պատմութեան. 1862, 140:

²⁷Հայոց պատմություն. 2014, 227-228:

²⁸Կիրակոս Գանձակեցի. 1961, 359:

²⁹Ովուբաբյան. 1975, 152:

որդիներին: Հետևաբար, Հաթերքի իշխանությունը միայն Դոփյաններին հաճնելը պայմանավորված էր այլ հանգամանքով: Բանն այն է, որ Վերջիններս իվանե Ա-ի ստորականներն էին, իսկ Հասան-Զալալը՝ ոչ: Հետևաբար, Դոփյանների հետ իվանե Ա-ի փոխհարաբերությունները կրում էին ուղղահայաց, իսկ Հասան-Զալալի հետ՝ հորիզոնական բնույթ: Վերոգրյալով պայմանավորված, Հասան-Զալալը՝ Զաքարյանների հետ իր մայրական կողմով ազգակցական կապը սուսկ եղակի բացառությամբ³⁰ թեթևակի շեշտելը պատահական չէր:

Հասան – Զալալի՝ Զաքարյանների ստորական չլինելու իրողությունից հետևում է, որ Ներքին Խաչենի իշխանությունը Վրացական թագավորության մաս կազմող և Զաքարյանների գլխավորությամբ ավատատիրական իշխանությունների ցանց հանդիսացող Զաքարյան Հայաստանի մաս չէր կազմում: Հետևաբար, նա ի տարրերություն Դոփյանների, Զաքարյան Հայաստանի՝ Զաքարյանների գլխավորած ավատատիրական սանդուղքում տեղ չէր զբաղեցնում:

Հասան-Զալալն այդուհանդեմ գնահատելի սերտ ազգօգուտ գործնական կապեր ուներ Զաքարյանների Վահրամյան տոհմաճյուղը գլխավորող իրենից հզոր իշխան և մայրական կողմով արցախյան արմատներ ունեցող Վահրամ Գագեցու հետ: Նա Վրացական թագավորության մսախութ-ովուցեսն էր՝ Բլուզ Զաքարեի որդին: Այդ կա-

³⁰Դիվան հայ վիմագրության. 1982, 38:

պերի վկայությունն է այն, որ Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» մեծարժեք, բայց, ցավոք, դեռ անտիպ երկը հեղինակվել է Հասան-Զալալի ու Վահրամ Գագեցու համատեղ խնդրանքով: Դա է փաստում այդ երկի մի հատվածի խորագիրը. «Խնդիրք Վահրամա իշխանի և Զալալա Հայշենո գավառի և պատասխանի Վանական վարդապետի»³¹:

Հասան-Զալալն Ականային, Զարաբերդին ու Կարկառին տիրացավ հավանաբար 1251 թ.³² Ուկե հորդայի խան Բաթուի որդի Սարթախի օգնությամբ: Վերջինս իր մոտ գնացած և օգնության խնդրանքով դիմած Հասան-Զալալին ընդառաջելով «տարեալ առ հայրն իւր, մեծապատիւ արար և ետ ի նա զիայրենիս իւր զԶարբերդ և զԱկանա և զԿարկառն, զոր հանեալ էին յառաջագոյն ի նմանէ ազգն թուրքաց և վրաց»³³: Իրականում, մասնավորապես Զարաբերդը սելջուկներից նախքան 1211 թ. ազատագրել և ոչ թե Հասան-Զալալից «հանեալ էին» Զաքարյանները³⁴: Քանի որ Սյունիքի ու Գեղարքունիքի ուղղությամբ ազատամարտերը գլխավորում էր Իվանե Ա-ն, անկասկած հենց նա է Զարաբերդն առել սելջուկներից³⁵: Գեղարդում թողած 1219 թվակիր մի արձանագրության մեջ էլ Իվանե Ա-ն հայտնում է, որ գրավել է նաև Ականան³⁶: Որ Կարկառը ևս նա է

³¹Մատենադարան, ձեռ. № 2189, թիվ 211^ա:

³²Գանձակեցի. 1961, 359:

³³Պատմութիւն նահանգին Սիսական. 1910, 392:

³⁴Հմմտ. Ուլուբարյան. 1975, 190:

³⁵Հովսեփյան. 1969, 299:

գրավել, կասկածից վեր է: Այսպիսով, նա էր Զարաբերդը, Ականան ու Կարկառը գրավել և հանձնել Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխան Վախտանգին:

Բաթու խանին Հասան-Զալալի այցելությունը Հ. Մանանդյանը համարել է «հավանական մի նշան, որ մոնղոլների օրոք Ներքին Խաչենը եղել է անկախ իշխանություն և չի գտնվել Զաքարյանների, այսինքն, Վրաստանի գերիշխանության տակ»³⁶: Լ. Բաբայանն էլ, վկայակոչելով Գանձասարի վանքում Հասան – Զալալի թողած 1240 թվակիր արձանագրության³⁷ սխալներով հրատարակված տեքստը, կարծիք է հայտնել, որ նա այդ ժամանակ «Ներքին Խաչենը հանել էր Վրաստանի ու Զաքարյանների գերիշխանությունից»³⁸:

Բ. Ովորաբյանն իր հերթին այդ արձանագրության նույն հրատարակությունն օգտագործելով հանդերձ եկել է ընդունելի եզրակացության, ըստ որի «40-ականներին (1240 – ականներին – Ա. Շ.) ևս Հասան – Զալալի տիրույթը չէր մտնում Ավագյան (Ավագ Զաքարյանի- Ա. Շ.) թումանի մեջ, այլ ինքնուրույն ռազմավարչական միավոր էր՝ միայն հարկատու մոնղոլներին»³⁹: Հետագայում՝ 1256 թ., Հասան- Զալալը Սարթակի օգնությամբ հասավ նրան, որ մոնղոլական մեծ խան Մանգուն (1251-1256) «ետ նմա գիր իշխանութեան իւրոյ տիրել սեփականաբար և ոչ երկնչել

³⁶Մանանդյան. 1952, 221:

³⁷Դիվան հայ վիմագրության. 2012, 38:

³⁸Բաբայան. 1964, 262:

³⁹Ովորաբյան. 1975, 192:

յումմեք»⁴⁰: Այսպիսով, XII դ. Վերջերից մինչև XIII դ. կեսերը Ներքին Խաչենի՝ հետագայում Հասան- Զալալյան անվամբ հայտնի դարձած իշխանատոհմը Զաքարյանների հետ ուներ հորիզոնական կապեր և նրանց ստորական չէր:

Հասան Ա Ծարեցու հետ ամուսնացած Զաքարյան իշխանադրատր Դոփն ամուսնու մահվանից հետո աչքի ընկավ Ծարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանությունում արտակարգ ազդեցությամբ և արդյունաշատ գործունեությամբ, որի շնորհիվ Ծարի իշխանատոհմը հետագայում կոչվեց նրա անունով: Ժամանակին Կարապետ Եպիսկոպոսը⁴¹ն նրա հետ համերաշխված Հ. Մանանդյանը⁴² Ենթադրել են, որ Դոփը Գեղարքունիքի մեծ մասը որպես օժիտ է ստացել: Սակայն, ինչպես նկատել է Բ. Ովոլֆարյանը, իվանե Ա-ը Գեղարքունիքն այդ ժամանակ դեռ չէր ազատագրել⁴³: Նա այն ազատագրեց հետագայում մինչև 1211 թ. և նվիրեց քրոջը: Դա Բ. Ովոլֆարյանն անհիմն համարում է Գեղարքունիքի նկատմամբ ծարեցիների՝ իբրև տիրույթի և ժառանգական իրավունքի միայն վերահաստատում⁴⁴:

Զաքարյանների ու Ծարի իշխանատոհմի ազգակցական կապը նաև Դոփի հեղինակությամբ ու ազդեցությամբ

⁴⁰Գանձակեցի. 1961, 373:

⁴¹Կարապետ. 1914, 155-156:

⁴²Մանանդյան. 1952, 156:

⁴³Ովոլֆարյան. 1975, 162:

⁴⁴Ովոլֆարյան. 1975, 162:

պայմանավորված՝ մնում էին սերտ: Դրա վկայությունն են ինչպես նրա, այնպես էլ իր երկու որդիների կողմից այդ կապի պարբերաբար հիշատակումները: Անխաթար էին նաև երկու տոհմերի գերակա-ստորակայական հարաբերությունները: Դրանք չխախտվեցին նաև մոնղոլական տիրապետության հաստատումով:

Ասվածի հավաստումն են հոր մահվանից հետո Ծարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխանության գլուխ անցած Գրիգոր իշխանի՝ Խադարա վանքին 1244 թ. նվիրած Ավետարանի հիշատակարանում իր իսկ թողած վկայությունները: Բանն այն է, որ նա իր հեծելազորով մի քանի հայ իշխանների, մասնավորապես Ավագ Զաքարյանի, Վահրամ Գագեցու և Հասան – Ջալալի հետ 1242-1243 թթ. մասնակցել է Իկոնիայի սովորականության դեմ մոնղոլների երկու արշավանքներին և հիշատակարանում պատմում է այդ մասին, լրացնելով Կիրակոս Գանձակեցուն⁴⁵: Նա նախ ներկայանում է իբրև «Գրիգոր, որդի Հասանայ Դոփին, քուերորդի սպարապետացն Հայոց և Վրաց Զաքարիայի և Իվանեի»⁴⁶: Ապա հայտնում է, որ երկրորդ արշավանքի ժամանակ Կեսարիայում «առեալ զԱւետատարանս պարոնն իմ Ավագն (Ավագ Զաքարյանը- Ա. Շ.) եւ ետ ինձ, եւ իմ խնտալից եղեալ... բերել ետու ի նախասացեալ սուրբ ուխտս»⁴⁷: Ընդունելով հանդերձ, որ Գրիգորը ենթակա էր

⁴⁵Գանձակեցի. 1961, 280:

⁴⁶Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 228:

⁴⁷Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ. 1984, 228:

իր քեռորդի Ավագին⁴⁸, Բ. Ովուբաբյանը չգիտես ինչու հավանական է համարել, որ «այս արշավանքի ընթացքում Գրիգորը գտնվել է Հասան - Զալալի հրամանի ներքո»⁴⁹, ինչն իրականությանը չի համապատասխանում:

Գրիգորի եղբայր Հովհաննեսը եղել է հոգևորական: Հաղբատի վանքի սուրբ Գրիգոր մատուցում թողած մի արձանագրության մեջ նա հայտնում է Զաքարե Բ և Իվանե Ա Զաքարյանների հետ իր ազգակցական կապի մասին, հավելելով, որ «հրամանաւ սոցա կոչեցա(j) յեպիսկոպոսութիւն սուրբ աթոռայս Հաղբատա(j)»⁵⁰: Հովհաննեսը հուղարկավորվել է Զաքարյանների հոգածությունը վայելող Հաղբատի վանքի գավթում՝ մոր կողքին: Ընդ որում, նրանց տապանաքարերի վրա արձանագրված է Զաքարե Բ-ի ու Իվանե Ա-ի՝ համապատասխանաբար քեռորդի և քոյր լինելը⁵¹:

Զաքարյանների և Ծարի հետագայում Դոփյան անվանումը ստացած իշխանատոհմի փոխհարաբերությունների մասին աղբյուրներում առկա տեղեկությունները վերոշարադրյալով սահմանափակվում են: Ինչ վերաբերում է արցախյան ծագում ոնեցող Խաղբակյանների հետ Զաքարյանների փոխհարաբերություններին, ապա Գ. Հովսեփյանի վերը վկայակոչված կոթողային աշխատությունում դրանք մանրագնին ու շահեկան քննության են արժանա-

⁴⁸ Ովուբաբյան. 1975, 190:

⁴⁹ Ովուբաբյան. 1975, 232:

⁵⁰ Ղաֆարյան. 1963, 180:

⁵¹ Դիվան հայ վիմագրության. 2012, 172:

ցել: Հետևաբար, դրանց ամսագրային հոդվածի սահման-ներում անդրադառնալու հարկը չկա:

Եզրակացություններ

Զաքարյանների և Արցախի իշխանատոհմերի փոխ-հարաբերությունները սկիզբ են առել մոտավորապես 1170-ական թվականներին՝ խնամիական կապերի հաստատու-մով: Դրանց միջոցով մեծ Սարգիս Զաքարյանն ուզում էր ամրապնդել իր նոր բարձրացող տոհմի դիրքերն ու ազդե-ցությունը: Զաքարյանների հետ խնամիանալով իրենց դիր-քերի ամրապնդմանն ու, ինչու չէ, հզորացման էին ձգտում նաև նրանց հետ խնամիացող Ներքին Խաչենի ու Շարի իշխանատոհմերը:

Զաքարյանները սերտ հարաբերություններ հաստա-տեցին Շարի իշխանատոհմի հետ, որը դարձավ նրանց նաև ստորական: Ինչ վերաբերում է Ներքին Խաչենի հե-տագայում Հասան-Զալայյան կոչված իշխանատոհմին, ապա այն Զաքարյանների ստորական չդարձավ և նրանց հետ պահպանում էր ոչ թե ուղղահայաց, ինպես Շարի իշ-խանատոհմի դեպքում էր, այլ՝ հորիզոնական կապեր: Դրա հետևանքով Ներքին Խաչենի իշխանությունը, ի տար-բերություն Շարի ու Հաթերքի կամ Վերին Խաչենի իշխա-նության, չմտավ Վրացական թագավորության մաս կազ-մող Զաքարյան Հայաստանի մեջ:

Գրականություն/References/Литература

1. **Բաբայան Լ.** 1964, Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական պատմությունը XIII-XIVդարերում, Երևան, Հայաստանի պետական հրատարակչություն, 608 էջ:
Babayan L. 1964, The Social-economic and Political History of Armenia in XIII-XIV centuries, Yerevan, State Publishing House of Armenia, 608 p.
2. Դիվան հայ վիմագրության 1982, պրակ V, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 347 էջ:
Divan of Armenian Lithograph 1982, vol. V, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 347 p.
3. Ժամանակագրութիւն Ստեփանոսի Օրբելեանի 1942, Երևան, Մատենադարան, 46 էջ:
Chronicles by Stepanos Orbelyan 1942, Yerevan, Matenadaran, p. 46.
4. Խոսրով Գանձակեցու վկայաբանությունը 1896, «Արարատ», էջ 590-591:
Martyrology by Khosrov Gandzaketsi 1896, "Ararat", pp. 590-591.
5. **Կարապետ Եպիսկոպոս** 1864, Դոփյանը և Մելիք-Շահնազարյանը, նյութեր հայ մելիքության մասին, մաս Բ, Էջմիածին, Էլեկտրաշարժ տպարան Մայր Աթոռի, 234 էջ:
Bishop Karapet 1864, Dopyan and Melik-Shahnazaryan, Materials on Armenian Melikutyun, part B, Etchmiadzin, electric printing, Mother See of Holy Etchmiadzin, 234 p.

6. **Կիրակոս Գանձակեցի** 1961, Պատմություն հայոց, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատարակչություն, 426 էջ:
Kirakos Gandzketsi. 1961, History of Armenians, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 426 p.
7. Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ ԺԳ դար 1984, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 987 էջ:
 Colophons of Armenian Manuscripts, XIII century 1984, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 987 p.
8. Հայոց պատմություն 2014, հ. II, գիրք Երկրորդ, Երևան, «Զանգակ» հրատ., 798 էջ:
 Armenian History 2014, vol. II, book 2, Yerevan, Zangak Publishing House, 798 p.
9. Հաւաքումն պատմութեան Վարդանայ Վարդապետի լուսաբանեալ 1862, ի Վենետիկ, Սուրբ Ղազար, 184 էջ:
 The Collection of History Illustrated by Vardan Vardapet 1862, Venice, St. Lazarus, 184 p.
10. **Հովսեփյան Գ.** 1969, Խաղբակեանք կամ Պոռշեանք հայոց պատմութեան մեջ, Անթիլիաս, 523 էջ:
Hovsepyan G. 1969, The Khaghbakians or Proshians in Armenian History, Antilius, 523 p.
11. **Մանանդյան Հ.** 1952, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հ. III, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 455 էջ:
Manandyan H. 1952, Examinational History of Armenia, vol. III, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 455 p.
12. Մատենադարան ձեռ. № 9188, թ. 211^ա:
 Matenadaran, manuscript № 9188, paper 211^a.

13. **Մարգարյան Հ.** 2023, Նշանավոր իշխանական տները Հայաստանում ժբ դարից - ժԳ դարի առաջին կեսին, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 279 էջ: **Margaryan H.** 2023, Notable Princely Dynasties of Armenia in the first half of XII-XIII centuries, Yerevan NAS Publishing House of RA, 279 p.
14. **Յակոբեան Ա.** 2020, Արքայատոհմերն ու իշխանատոհմերը բուն Աղուանքում և Հայոց Արևելից կողմանքում անտիկից մինչև ժԳ դար (պատմադրյուրագիտական քննություն), Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 439 էջ: **Yakobean A.** 2020, Royal and Princely Dynasties in Aghuanq and Eastern Armenia from antic times till XIII century (historical source studies), Yerevan, NAS Publishing House of RA, 439 p.
15. Նոր բառգիրք հայկագեան լեզուի 1979, հատոր առաջին, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատ., 1140 էջ: New word book of Haykazyan language 1979, vol. I, Yerevan, Publishing House of Yerevan State University, 1140 p.
16. **Շահնազարյան Ա.** 1990, Վահրամյանների իշխանությունը, Երևան, «Հայաստան», 215 էջ: **Shahnazaryan A.** 1990, Princely Dynasty of the Vahramyans, Yerevan, Armenia Publishing House, 215 p.
17. Պատմութիւն նահանգին Սիսական արարեալ Սեփաննոսի Օրբելեան արքեպիսկոպոսի Սինեաց 1910, Էլեկտրաշարժ տպարան օրիորդ Ն. Աղանեանցի, 618 էջ:

- The History of Sis state by Stepanos Orbelyan and archbishop of Syunik 1910, electric printing of Ms. N. Aghayants, 618 p.
18. **Ուլուբայյան Բ.** 1975, Խաչենի իշխանությունը X-XVI դարերում, Երևան, ՀՍՍՌ ԳԱ հրատ., 454 էջ:
Ulubabyan B. 1975, The Princely Dynasty of Khachen in X-XVI centuries, Yerevan, NAS Publishing House of Soviet Armenia, 454 p.
 19. **Ան-Նասիվի** 1973, Шихаб ад-Дин мухаммед ан-Насиви, Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны, Баку, издательство "Элм", 453 с.
An-Nasivi 1973, Shihab ad-Din Muhammad an-Nasivi, The Life of Sultan Jalal ad-Din Mankburny, Baku, Elm Publishing House, 453 p.
 20. **Օրբելի Ի.** 1963, Избранные труды, насан - Джалал, князь Хаченский», Ереван, изд. АН АРМ. ССР, 683 с.
Orbeli I. 1963, Selected Works, Hasan Jalal, Prince of Khachen, Yerevan, Publishing House of Soviet Armenia, 683 p.

Арташес И. Шахназарян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Взаимоотношения Закарянов с княжескими родами Арцаха (последняя четверть XII в. – первая половина XIII в.)

Резюме

Освободительная война армянского народа против сельджукского владычества, начавшаяся в конце XII в. под эгидой грузинских Багратидов и под руководством Закарянов, длилась около сорока лет и привела к положительным результатам. Были освобождены большинство центральных, северных и северо-

восточных гаваров страны. Княжеские роды, сумевшие сохранить свое существование, усилились благодаря благоприятным условиям, при этом Закаряны сыграли в этом ключевую роль.

Среди них в определенной степени выделяются арцахские княжества: Верхний Хачен (или Атерк), Цар и Нижний Хачен. Закаряны установили родственные связи с княжескими родами двух последних. Однако характер этих отношений был различным: если княжеский род Цара находился в вассальной зависимости от Закарянов, то род Нижнего Хачена сохранял равноправные отношения, поскольку Закаряны не являлись их сюзеренами.

Этот факт свидетельствует о том, что до установления монгольского владычества княжество Нижнего Хачена не входило в состав Закарянской Армении, представлявшей собой сеть феодальных княжеств под управлением Закарянов и находившейся в составе Грузинского царства.

Ключевые слова: Арцах, Закаряны, Иване I, Доп, Цар, Гасан-Джалал, Хоришах.

**Artashes I. Shahnazaryan, Institute of History of the NAS RA,
Ph.D in History, Associate professor, The Relationship Between the
Zakaryans and the Princely Dynasties of Artsakh (Last Quarter of
the XII Century - First Half of the XIII Century)**

Summary

At the end of the XII century, the Armenian people's liberation war against Seljuk rule – which lasted for about forty years and was led by the Zakaryans under the auspices by the Georgian Bagratunis – achieved positive results. Most of the central, northern, and northeastern provinces of the country were liberated. The ruling dynasties that had managed to preserve their existence under foreign domination rose in power due to favorable conditions, and their principalities became powerful – a process

in which the Zakaryans played a crucial role.

Among them, the principalities of Upper Khachen (or Haterk), Tsar and Lower Khachen are of particular significance. The Zakaryans had established marital ties with the ruling dynasties of the latter two. However, the Zakaryans' relationships with them were not identical. While the ruling family of Tsar maintained a vassal relationship with the Zakaryans, the ruling family of Nerkin Khachen maintained equal relations, as the Zakaryans were not their suzerains.

This fact indicates that, prior to the establishment of Mongol rule, the principality of Nerkin Khachen was not part of Zakaryan Armenia. Rather, it belonged to the Georgian Kingdom and existed alongside a network of feudal principalities under Zakaryan leadership.

Key words: Artsakh, Zakaryans, Ivan I, Dop, Tsar, Hasan-Jalal, Khorishah.

ՆՈՐ ԵՎ ՆՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԱՐԾՎԻ Հ. ԲԱԽՉԻՆՅԱՆ

ԳԱԱ պարմության ինստիտուտ, բ.գ.թ.

artsvi@yahoo.com

ID 0000-0001-8637-6946

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-70

ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔԻ ՀԱՅԵՐԻ

ՀԻՇԱՏԱԿՈՒՄՆԵՐԸ ԶՈՉԵՖ ՎՈԼՖԻ 1827-1828

Թթ. ՈՒՂԵԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ*

Ամփոփում

Հրեական ծագմամբ բրիտանացի միսիոներ Զողեֆ Վոլֆը (1795–1862) 1820-ականների սկզբին ձեռնարկել է իր առաջին միսիոներական ուղևորությունը Մերձավոր Արևելքի տարբեր շրջաններ (Եգիպտոս, Սիրիա, Լիբանան, Երուսաղեմ, Պաղեստին, Վերին Միջագետք, Իրաք): Իր առաջին՝ «Հրեաների միսիոներ վարդապետ Զողեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» (հ. 1–3, 1827–1829) ուղեգրության մեջ, նա արձանագրել է իր հանդիպումները տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների, նաև՝ հայերի հետ: Լինելով միսիոներ՝ Վոլֆը մշտապես օթևանել է հայկական վանքերում, սերտ հարաբերություններ հաստատել հատկապես հոգևորականության հետ: Այս շիումների, ինչպես

* Ներկայացվել է 31.III.2025 թ., գրախոսվել է 04.IV.2025 թ., ընդունվել է դպրագրության 20.VI.2025 թ.:

նաև ընթերցումների շնորհիվ խորացել են նրա գիտելիքներն ու տեղեկությունները հայոց պատմության, եկեղեցու, գրականության և լեզվի վերաբերյալ: Վոլֆը հաճախ է հիշատակել իր քննարկումները հայ հոգևորականների հետ՝ կենտրոնանալով Ավետարանի գիտելիքների և հայ ժողովրդի մեջ քրիստոնեական գրագիտության տարածման կարևորության վրա: Նա բազմիցս արտահայտել է գաղափարներ՝ Հռնդոնում հայկական դպրոց և Հալեպում քրիստոնեական դպրոց հիմնելու վերաբերյալ՝ նպատակ ունեալով ոչ միայն տարածել աստվածաշնչյան գիտելիքներ, այլև ամրապնդել բրիտանական ազդեցությունը հայերի և տարածաշրջանի լայն շրջանակում:

Զոգեֆ Վոլֆի առաջին ուղեգրությունն արժեքավոր պատմական աղբյուր է Միջագետքի և Մերձավոր Արևելքի հայության, ինչպես նաև XIX դ. առաջին կեսի հայկական կրոնական կենտրոնների վերաբերյալ: Այն պարունակում է նաև հիշատակումներ մի քանի հայ գործիչների և ժամանակի հայոց կյանքի երևույթների մասին:

Բանալի բառեր¹ Զոգեֆ Վոլֆ, միսիոներ, ուղեգրություն, հայ համայնքներ, Մերձավոր Արևելք, Միջագետք, Լիբանան, Երուսաղեմ, կրոնական բանավեճեր:

Ներածություն

Բրիտանացի միսիոներ Զոգեֆ Վոլֆը թողել է ուղեգրական հարուստ ժառանգություն, որն առատ է Արևելյան և Արևմտյան Հայաստանի և տարբեր հայօջախների մասին արժեքավոր տեղեկություններով: Այդուհանդերձ, այդ գոր-

ծիչը և նրա եզակի սկզբնաղբյուրները մեծ մասամբ վրիպել են հայ ուսումնասիրողների ուշադրությունից¹:

Զոգեֆ Վոլֆը 24 տարեկանից աշխատել է Լոնդոնի Աստվածաշնչյան բրիտանական և օտարերկրյա ընկերությունում՝ հայտնի դառնալով որպես «հրեաների անգլիական միսիոներ»: Նա XIX դարում Բրիտանիայի թերևս ամենաշատ շրջագայած միսիոներն էր, որը ճանապարհորդել է Եվրոպայում, ԱՄՆ-ում, Աֆրիկայի հյուսիսում և, հատկապես, Ասիայում, հաճախ՝ մի քանի անգամ, ինչը բացահիկ էր տվյալ ժամանակաշրջանի ճանապարհորդների համար: Իր առաջին ուղևորությունն Ասիա նա սկսել է 1821-ին՝ մոտ հինգ տարի շրջելով Սինայի թերակղզում, Հևանտում, Միջագետքում, Պարսկաստանում, Վրաստանում և Ղրիմում:

Սույն հոդվածը վերաբերում է Վոլֆի՝ Արևելք կատարած առաջին՝ 1821–1822 թթ. միսիոներական ուղևորության արդյունքը հանդիսացող «Հրեաների միսիոներ վարդապետ Զոգեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» ուղեգործյանը (1827-ին լույս է տեսել առաջին հատորը՝ առանց «հ. 1» նշան, 1828–1829-ին՝ երկրորդ և երրորդ հատորները՝ «հ. 2» և «հ. 3» նշումներով)²: Մեր ուշադրության կենտրոնում Մերձավոր Արևելքի հայերի վերաբերյալ հիշատակություններն են, որոնք գետեղված են մասնավորապես առաջին երկու հատորներում: Հայերին վերաբերող հատվածներն ու հիշատակությունները տալիս ենք անգերենից մեր կատարած թարգմանությամբ՝ անհրաժեշտության

¹ Բացառություն է մեր հրապարակումը՝ **Bakhchinyan.** 2024, 186-193:

² Wolff. 1827, 1828.

դեպքում կատարելով որոշ պարզաբանումներ:

Վոլֆի շփումները Երուսաղեմի հայերի հետ

Վոլֆն առաջին անգամ հայերի հանդիպել է 1817-ին՝ Հռոմի Պրոպագանդայի դպրոցում ուսանելու տարիներին³: Իսկ քննվող ուղեգրության մեջ հայերի մասին նրա առաջին հիշատակությունը վերաբերում է 1821-ի սեպտեմբերին: Գտնվելով Ալեքսանդրիայում՝ նա հիշել է հայ Յուսուֆ Պողոսին, որը, ըստ նրա, երկրի իրական վարչապետը չէ, սակայն համարվում է Եգիպտոսի փաշայի վարչապետը⁴: Վոլֆը նկատի ունի Եգիպտոսի առևտրի և արտաքին գործերի նախարար Պողոս բեյ Յուսուֆյանին (1775–1844), որը եղել է փոխարքա Մուհամմադ Ալի փաշայի քարտուղարը: Մեկ ամիս անց Երուսաղեմում Վոլֆը վեց հայերի ընկերակցությամբ ճաշել է փաշայի առաջին թարգմանիչ Ռեյսդենի հետ⁵: Նա նշել է, որ նպատակ ունի կարդալ նաև «Հայաստանի Օգոստինոս» սուրբ Ներսեսի գրությունները⁶: Կարծում ենք, որ Վոլֆը Ներսես Շնորհալու և քրիստոնեական սուրբ Օգոստինոս Երանելիի (354–430) միջև նմանություն տեսել է՝ նկատի ունենալով նրանց կողմից Աստծո հետ կենդանի հարաբերություններ հաստատելու և Տիրոջը հասարակ մարդկանց ներկայացնելու ջանքերը: Առհասարակ, Ներսես Շնորհալին, որն այդ ժամանակ արդեն հրատարակվել էր Եվրոպական լեզուներով (1823-ին

³ Wolff. 1860, 93-94.

⁴ Wolff. 1827, 117.

⁵ Wolff. 1827, 164.

⁶ Wolff. 1827, 194.

Վենետիկի Մխիթարյանները «Հաւատով խոստովանիմ» աղոթքը լուս էին ընծայել 24 լեզվով), հաճախ է հիշվում Վոլֆի այս և հետագա ուղեգրություններում:

1822-ի հունվարի 28-ին Վոլֆը Ղազիրից (այժմ՝ Լիբանանում) մարոնիտների քոլեջ գնալու ճանապարհին երեք ժամ կանգ է առել կաթոլիկ հայկական մենաստանում: Նա նշել է, որ «շատ հյուրասեր և բարի» հայ կրոնավորները ցանկություն են հայտնել դպրոց բանալ Անգլիայում: Ինքը՝ Վոլֆը, իրազեկ է եղել դավանաբանական բաժանումներին ոչ միայն հոռմեադավան ու միաբնակ, այլև կաթոլիկ հայերի մեջ: Նա մասնավորապես նշել է, որ «Հռոմի Պրոպագանդայի հայ անդամները հետապնդում են մոլեռանդ, առաքինի և ազնվաբարո հայերին, որոնք կոչվում են Մխիթարյաններ Վենետիկում.... նրանք հալածում են նրանց որպես հերետիկոսների, որպես Քրիստոսի թշնամիների, որ պաշտպանում են Աստծո խոսքը, Քրիստոսի խոսքը մեծ մոլեռանդությամբ: Մխիթարյանները տպագրատուն են հիմնել Վենետիկում և արդեն իրատարակել են ոչ միայն հոգևոր թեմաներով բազմահազար գրքեր, այլև Աստծո խոսքն ինքնին»⁷: Այնուհետև շարունակել է. «Ես կրկին կանչեցի հայր Վարդապետին, հայկական վանքի մեծավորին ու նորից խոսեցի Վենետիկի իրենց եղբայրների ու Հայաստանի այլ քրիստոնյաների հետ իրենց հաշտվելու կարևորության մասին: ...Նրանք ինձ ընթերցելու տվեցին 12-րդ դարի հայոց պատրիարք սուլթան Ներսես Կլայնցու

⁷ Wolff. 1827, 164. 238-239.

(Ներսես Շնորհալու – Ա. Բ.) աղոթքը»⁸, որին հետևում է Ներսես Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» աղոթքի անգլերեն շարադրանքը⁹: Թեև նշված չէ, սակայն աղոթքը վերցված է Մխիթարյանների 1824 թ. 24-եզրյա հրատարակությունից: Դրանից հետո նրան կարդալ են տվել Ներսես Լամբրոնացու ճառը¹⁰, և Վոլֆը հարկ է համարել բացատրել, որ «Վերոհիշյալ Ներսես Լամբրոնացին որդին էր Սեբաստիայի իշխան Օշին Հայի. նա ստեղծել էր Տարսոնի և Լամբրոնի արքեպիսկոպոսությունը Գրիգոր Դ պատրիարքի օրոք»¹¹: Այսպիսով, աստիճանաբար սկսվել է Զոգեֆ Վոլֆի ծանոթությունը նաև Արևմուտքում տակավին գրեթե անհայտ հայ գրականության (թեկուզ՝ կրոնական) հետ:

Մարտի 10-ին Վոլֆին «սիրալիր» ընդունելության է արժանացրել Երուաղեմի հայոց պատրիարքը, որին էլ միսիոները տվել է Պողոս Յուառիանի նամակը: Պատրիարքը և մյուս հայերը նրան օթևան են առաջարկել վանքում, որը նա ընդունել է «առանց դույզն-ինչ երկմտանքի»¹²: Այստեղ նա հանդիպել է հայր Պաոլո Ռութունցիին (Պողոս Ռութունցյան), որը, ըստ նրա, «ազնվաբարո մարդ է և նշանակալի տաղանդի տեր.... նա, ավա՞ղ, Փարիզում ծանոթացել է ժան Ժաք Ռուսոյի և Վոլտերի գրվածքներին,

⁸ Wolff. 1827, 164. 240.

⁹ Wolff. 1827, 164. 240-242.

¹⁰ Wolff. 1827, 164. 242.

¹¹ Wolff. 1827, 164. 242.

¹² Wolff. 1827, 164, 251-252.

որոնք նրան լրիվ թերահավատ են դարձրել»¹³: Բնական է կրոնավորի ժխտական վերաբերմունքն աթեստական հայացքների տեր Ռուսոյի և Վոլտերի հանդեպ: Պաոլո Թութունջին ևս Վոլֆի հետ խոսել է իր ազգի հոգևոր կարիքներից՝ հայտնելով, որ անգլիացի ազգը մեծ օրինություն կլինի հայերի համար, եթե Կ.Պոլսում հիմնեն հայկական քոլեջ ու եկեղեցի և այնտեղ ուղարկեն ճշմարիտ Ավետարանը քարոզող մեկի¹⁴:

Մարտի 14-ին Վոլֆն այցելել է Աքշեհիրի Հակոբ արքապիսկոպոսին, որը նաև եղել է Երուսաղեմի Գաբրիել պատրիարքի ընդհանուր փոխանորդը¹⁵: Ավելի ուշ՝ մարտի 24-ի գրառման մեջ այս արքեպիսկոպոսի անունը նա հիշել է որպես Հակոբ Մինասիա (թերևս՝ Մինասյան): Նրանք գրուցել են Բրիտանական և Օտարերկրյա Աստվածաշնչյան միության կողմից Սուրբ Գիրքը խոսակցական հայերեն և հայտառ թուրքերեն հրատարակելու անհրաժեշտության մասին¹⁶: Նույն օրվա գրառման մեջ նա հիշել է, որ հանդիպել է տարեց հայ Մթիվեն Քաչոյին (հավանաբար՝ Ստեփան Խաչո) Կալկաթայից, որը վկայել է, որ Հնդկաստանի միսիոներներն ապրում են սրբակենցաղ կյանքով, մինչ այլ անգլիացիներ ապրում են աշխարհիկ կյանքով¹⁷:

Երուսաղեմում Վոլֆը պարբերաբար այցելել է հայոց

¹³ Wolff. 1827, 254.

¹⁴ Wolff. 1827, 281.

¹⁵ Wolff. 1822, 123.

¹⁶ Wolff. 1827, 258-259.

¹⁷ Wolff. 1827, 259.

պատրիարքին, իսկ բազմաթիվ տեղացի հայեր, իր կացարանում թե փողոցում, նրանից խնդրել են քրիստոնեության վերաբերյալ հայերեն ու հայատառ թուրքերեն գրքույկներ և Սուլը Գրքեր¹⁸: Այցելել է նաև Բեթղեհեմի հայոց վանք, իսկ լինելով Նազարեթում՝ նշել է, որ այնտեղ հրեաներ չկան, այլ մոտ 1000 կաթոլիկներ, 400 հովներ և քարթիվ հայեր՝ առանց որոշակիացնելու քանակը¹⁹: Նա շարունակել է քրիստոնեական գրագիտություն տարածել մարդկանց մեջ ու հայտնել է հայոց մասին հետևյալ վկայությունը. «Մի սնահավատ սովորություն կա հայերի մեջ, որը դեմ է Ղևոնական ժթ «Զպիտի մարմինդ կտրես»-ին²⁰. Նրանք խաչի և Մարիամ կույսի պատկերով կտրվածք են անում իրենց մարմնի վրա: Էջմիածնի պատրիարքը զուր տեղն է իր հավանությունը տվել այդ առթիվ: Հնարավորությունն օգտագործելով՝ ես այդ մասին խոսեցի հայերի հետ: Նրանք այնքան տպավորված էին իմ հայտնած ճշմարտությունից, որ նրանցից ոմանք ինձ խնդրեցին տալ բժշկական միջոցներ՝ ջնջելու համար այդ սնահավատական գործը»²¹: Իրականում այստեղ նա «կտրվածքներ» ասելով նկատի ունի դաշվածքները (դա է հուշում հիշատակությունը խաչի և Մարիամ կույսի պատկերների և ապա՝ դրանք ջնջելու մասին), որը կապ չունի որոշ մարդկանց կողմից զգացմունքային ճնշվածությունից ազատվե-

¹⁸ Wolff. 1827, 320.

¹⁹ Wolff. 1828, 150.

²⁰ Բառացի՝ «Մահացած հոգու համար ձեր մարմնի վրա կտրվածքներ չանեք և ձեզ վրա դաշվածքներ չանեք» (Ղեւղական, Ժթ:28):

²¹ Wolff. 1827, 305.

լու նպատակով մաշկի վրա կտրվածքներ անելու սովորութի հետ:

Վոլֆը Լիբանանի և Միջագետքի հայերի մասին

Վոլֆի առաջին ուղեգրության երկրորդ հատորը շարունակում է 1823-1824 թթ. հեղինակի՝ Պաղեստին և Սիրիա կատարած ուղևորության նկարագրությունը:

1823-ի սեպտեմբերին Վոլֆն այցելել է «կաթոլիկ հայոց պատրիարքի նստավայրը»՝ Բիզմարի (Զմմառ) միաբանություն, որը նա անվանել է «հիանալի» և շարունակել. «Մեզ այնտեղ շատ քաղաքավարի ընդունեց հայոց պատրիարքը: Նրա անունը Գրիգոր է: Մենք այնտեղ հանդիպեցինք մի հայ Եպիսկոպոսի, որին ես ճանաչում էի Հալեպից: Զմմառը Եկեղեցական ճեմարան է: Այդ քոլեջում կան քսան Երիտասարդներ, որոնք ուսումնասիրում են քերականություն, բանաստեղծություն, հոեսորաբանություն, փիլիսոփայություն և աստվածաբանություն: Նրանք իրենց ուսումը ստանում են հայերեն: Մենք երկար քննարկում ունեցանք Եպիսկոպոսների հետ: Գաբրիել արքեպիսկոպոսը և Հալեպի հայ Եպիսկոպոսները և մի Երիտասարդ քահանա, որը խոսում է իտալերեն, առանձին-առանձին գնեցին տասը օրինակ Սուլք գիրք, բայց աղաչեցին մեզ այդ մասին չպատմել պատրիարքին կամ միաբանությունից որևէ մեկի»²²: Վերջին վկայությունը ցույց է տալիս օտարագգի միսիոներների և նրանց միջոցով տարածվող թեկուզն կրոնական գրականության հանդեպ հայ Եկեղեցու ունե-

²² Wolff. 1828, 173-174.

ցած անհանդուրժողականությունը:

Դամասկոսի քնակիչների մեջ Վոլֆը հիշել է 200,000 մուսուլման, 4000 ռաբինական և երեք կարահտ հրեա ընտանիք, 12000 հոլյն, կաթոլիկ²³, ասորի ու հայ քրիստոնյաներ²⁴: Նոյն քաղաքում նա այցելել է Հռոմի Պրոպագանդայի վանք, որի դպրոցի 160 աշակերտների մեջ եղել են ոչ միայն կաթոլիկներ, այլև հոլյներ, հայեր և փոքրաթիվ հրեաներ²⁵:

Դամասկոսից հետո Վոլֆը մեկնել է Հալեպ: Այնտեղից գրած մի նամակում վկայել է, որ այդ քաղաքը «քնակեցված է թուրքերով...., ասորիներով, հայերով, քաղեացիներով և հոլյն քրիստոնյաներով ու հրեաներով. բոլոր այս ժողովուրդներն ապրում են մեծ տգիտության մեջ և, հետևաբար, հատկապես այս քրիստոնյա հարանվանությունների մեջ այդ պապականներն ունեն ազատ մուտք, և նրանց աշխատանքը ոչ թե հանուն Աստծո արքայության առաջխաղացման է, այլ հանուն Պապի վարդապետությունների»²⁶: Եղել է նաև Եփրատի ափին գտնվող Բիր (այժմ՝ Բիրեջիկ, Թուրքիա) քաղաքում, վկայել, որ նրա 1500 թուրք քնակիչներն ապստամբել են սովորանի դեմ և 25 տարի է հարկ չեն վճարում և որ այնտեղ կան «նաև 25 հայ քրիստոնյաներ երեք քահանաներով, որոնք ապրում են մեծ տգիտության

²³ Այստեղ և հետագայում «կաթոլիկ» ասելով Վոլֆը նկատի ունի բոլոր հռոմեադավան արևելցիներին:

²⁴ Wolff. 1828, 184.

²⁵ Wolff. 1828, 204.

²⁶ Wolff. 1828, 220.

մեջ»²⁷, իսկ հայերի եկեղեցին գտնվում է մի քարանձավի մեջ²⁸: Այս և նախորդ մեջբերման մեջ հիշված տգիտությունը պետք է հասկանալ քրիստոնեական գրագիտության բացակայության առումով:

Շարունակելով իր ուղին դեպի Ուրֆա՝ Վոլֆն այցելել է տեղի հայ եպիսկոպոսին և վկայել, որ քաղաքում ապրում է 200 ասորի և 2000 հայ ընտանիք՝ երկու մեծ ու հնագույն եկեղեցիներով²⁹:

Վոլֆի հաջորդ հայկական գրառումը վերաբերում է Ուրֆայից 10 կմ հեռավորությամբ գտնվող Կերմուշ (Կարմունց) գյուղին: «Փետրվարի 14-ին, - գրում է նա, - հասանք Կերմուշ կոչվող գյուղ, որն ամբողջությամբ բնակեցված է հայ քրիստոնյաներով, որոնք ունեն մեկ եկեղեցի և երկու քահանա: Նրանք ինձ կանչեցին և իմանալով իմ ճամփորդությունների նպատակը՝ ցանկացան հայերեն Աստվածաշունչներ ունենալ: Մենք այստեղ շատ հյուրընկալ վերաբերմունքի արժանացանք մի հայ քրիստոնյայի տանը»³⁰:

Վերին (Հայոց) Միջագետքի հին բերդաքաղաքներից

²⁷ Wolff. 1828, 232.

²⁸ Wolff. 1828, 232-233.

²⁹ Wolff. 1828, 235.

³⁰ Wolff. 1828, 240. Կերմուշում մինչև 1915-ը բնակվել է շուրջ 1000 հայ: Դրանից հետո այդ հայաթափված գյուղում եկեղեցին որպես ախոռ է գործածվել, մինչև որ 2013-ին առաջին անգամ կրոնական արարողություն է տեղի ունեցել: Սակայն 2014-ին Ստամբուլի «Ակոս» պարբերականն ահազանգել է եկեղեցու քանդման մասին (տես Թուրքիայում շարունակվում է Կերմուշի հայկական եկեղեցու ավերումը, <https://www.tert.am/am/news/2014/05/16/kermush-church-1088250> մուտք՝ 9.04.2024):

Մերդին ժամանած Վոլֆը գրել է, որ, այնտեղ օրենքի համաձայն, կաթոլիկ հայերը, քաղղեացի կաթոլիկները, ասորիները և ասորի կաթոլիկները պետք է միասին պահեն մեծ Պահքը, որը սկսվում է Զատիկից 50 օր առաջ, սակայն այդ տարի հայ կաթոլիկները ծնացրել են, թե նամակներ են ստացել Կոստանդնուպոլիսի հայ և հոյն պատրիարքներից, ըստ որոնց այս տարի պահքի օրերն սկսվում են մարտի 20-ին³¹: Մերդինի հայ կաթոլիկների թիվը Վոլֆը հաշվել է 200 ընտանիք՝ մեկական եկեղեցիով և դպրոցով: «Նրանք ունեն, – գրել է նա, - արքեպիսկոպոս և եպիսկոպոս, որոնք ամբողջովին կախված են Հռոմի Պրոպագանդայից, բայց ժամանակավոր հարցերում կախված են Կոստանդնուպոլիսի հայոց պատրիարքից: Իփսումարի (Զմմառ – Ա. Բ.) հայ կաթոլիկ պատրիարքն իրավասություն չունի Միջագետքի հայ կաթոլիկների նկատմամբ:Այսօր երեկոյան, - շարունակել է նա, - այցելեցի Ելիաս Շաղիին, որի մոտ հանդիպեցի երկու հայ կաթոլիկ եպիսկոպոսների, երկուսն էլ՝ Հռոմի Պրոպագանդայի աշակերտների: Արքեպիսկոպոսի անունը Յուակիմ Թասպաս³² է, և նա յոթանասուն տարեկան է»³³: Թասպաս արքեպիսկոպոսը Վոլֆին խնդրել է ձեռք բերել «որոշակի քանակությամբ» լանքասթերյան համակարգի արաբերեն, թուրքերեն, հայերեն և պարսկերեն օրինակներ³⁴: Ուշագրավ է,

³¹ Wolff. 1828, 250.

³²Հովակիմ Թասպասյան (1753–1830), 1788-ից Մարդինի արքեպիսկոպոս:

³³ Wolff. 1828, 251-252.

³⁴ Wolff. 1828, 260-261.

որ Օսմանյան կայսրության գավառում բնակվող հայ հոգ-
և լորականը հետաքրքրութել է տվյալ ժամանակաշրջանում
Եվրոպական տարրական դպրոցներում տարածում գտած
ուսուցման մեթոդների և կազմակերպման մի համակար-
գով, որը հայտնի էր իբրև փոխադարձ ուսուցման կամ Բել-
Լանքարթերի համակարգ³⁵:

Մերդինից Վոլֆը շարունակել է իր ճանապարհը դեպի
հարավ՝ նշելով, որ «Բիրից մինչև Մուտով ասորիներն ամ-
բողջ երկիրը համարում են Սիրիայի երկիր: Հայերն այն
անվանում են Փոքր Հայք»³⁶: Բաղդադ մեկնելու ճանա-
պարհին նա հայերի է հանդիպել Ամուտա քաղաքում (այժմ՝
Հասաքայի նահանգում, Թուրքիայի սահմանին մոտ),
որոնց առանց մանրամասնելու բնութագրել է որպես «ոչ
քաղաքակիրթ»³⁷:

Ժամանելով Բաղդադ՝ Զոգեֆ Վոլֆը ջերմ հյուրընկա-
լության է արժանացել տեղացի հայ Սարգիս աղայի տանը,
որին նա հիշել է որպես «Բաղդադում բրիտանական գոր-
ծակալ»³⁸: Ըստ Վոլֆի՝ «Բաղդադում ընդհանուր առմամբ
կա մոտ 500 քրիստոնյա տուն՝ հայեր, հայ կաթոլիկներ,

³⁵ Փոխադարձ ուսուցման մեթոդն իրարից անկախ մշակել են
անգլիացի մանկավարժներ Էնդրյու Բելը և Զոգեֆ Լանքարթերը:
Ըստ այս համակարգի՝ ավագ և առավել առաջավոր աշակերտներն
ուսուցիչների ղեկավարությամբ պարապմունքներ են անցկացնում
մյուսների հետ: Փոխադարձ ուսուցումը կիրառվել է Հնդկաստա-
նում, ապա, XIX դ. սկզբին, լայն տարածում ստացել մի շարք
երկրներում (ԱՄՆ, Ֆրանսիա, Բելգիա, Ռուսաստան և այլն):

³⁶ Wolff. 1828, 262.

³⁷ Wolff. 1828, 271.

³⁸ Wolff. 1828, 288.

ասորիներ, ասորի կաթոլիկներ և քաղդեացի կաթոլիկներ»³⁹:

Գրելով Դամասկոսի «Տեռա Սանտա» (Սուլբ Երկիր)՝ կաթոլիկ միաբանության մասին՝ Վոլֆը նշել է, որ նրա վանականներն ունեն դպրոցական մի հաստատություն, որտեղ դասավանդում են անվճար, և այդ դպրոց հաճախում են ոչ միայն կաթոլիկները, այլև հույներ, ասորիներ, հայեր և որոշ մոլեռանդ հրեաներ⁴⁰: Իսկ Բասրայում, ըստ նրա, «կա հայ քրիստոնյաների 25 ընտանիք, որոնք Պարսկաստանից են: Խոսում են և՛ հայերեն, և՛ պարսկերեն, իսկ մի քանիսը՝ անգլերեն, որոնք անուղղակիորեն գտնվում են քրիստոնական ենթակայության ներքո: Նրանք ունեն մեկ եկեղեցի և մեկ քահանա: Հիմա այստեղ է Հայաստանի Վան լճի՝ ամբողջությամբ հայարժակ Սիմ (Լիմ – Ա. Բ.) կղզու հայ եպիսկոպոս Սիմոն Վասթոնը: Նա բանիմաց մարդ է»⁴¹: Հետագա գրառման մեջ Վոլֆը 17 կետով 11 էջով ներկայացրել է Բասրայում հայ եպիսկոպոսի հետ իր հարց ու պատասխանը հայ ժողովորդի և մասնավորապես՝ հայ եկեղեցու մասին⁴²: Հետագա շարադրանքում հայությանն այդքան մանրամասն ներկայացնելը նա բացատրել է այսպես. «Հայերը, ինչպես կերևս իմ օրագրի երկրորդ մասում, շատ տրամադրի են հրահանգներ ստանալու, հետևաբար ես մտածեցի մանրամասն պատմել նրանց մասին, և իմ փոքր կարողությամբ նպաստել այդ ազգի մասին

³⁹ Wolff. 1828, 289.

⁴⁰ Wolff. 1828, 297.

⁴¹ Wolff. 1828, 308-309.

⁴² Wolff. 1828, 346-357.

ավելի ճշգրիտ իմացությանը»⁴³:

Եզրակացություններ

«Հրեաների միսիոներ վարդապետ Զողեֆ Վոլֆի միսիոներական օրագիրը» ցարդ հայագիտությանն անծանոթ մնացած, սակայն արժեքավոր սկզբնաղբյուր է XIX դ. առաջին կեսի Մերձավոր Արևելքի (Երուսաղեմ, Սիրիա, Լիբանան, Վերին Միջագետք, Իրաք) հայ բնակչության, մասնավորապես՝ հայ կրոնական կենտրոնների վերաբերյալ: Իր շարադրանքում նա երբեմն մատնանշել է այս կամ այն բնակավայրի հայության թիվը (ըստ անձանց կամ ընտանիքների), ինչը լրացնում է վկայություններ է տրամադրում տվյալ ժամանակաշրջանում տարածաշրջանի հայության ժողովրդագրական պատկերը վերականգնելու համար: Հանրահայտ փաստերի հետ մեկտեղ Վոլֆը վկայություններ է թողել որոշ փոքր բնակավայրերի հայերի (Բիր, Ամուղա, Կերմուշ) մասին, ինչպես նաև հիշատակել ժամանակի մի քանի ականավոր հայ գործիչների (հիմնականում՝ կրոնավորների): Արժեքավոր են նաև հեղինակի վկայությունները Մերձավոր Արևելքի հայության միջդավանաբանական առնչությունների և հայերի մեջ աստվածաշնչյան գրագիտության հանդեպ ունեցած ծգոտումների վերաբերյալ:

⁴³ Wolff. 1828, 358.

Գրականություն/References/Литература

1. **Bakhchinyan A.** 2024, Joseph Wolff's Letter on Establishing an Armenian School in London, "International Review of Armenian Studies", № 3 (36), pp. 186-193.
2. **Wolff** 1822, Mission to Jerusalem. From the London Jewish expositor of September, 1822. Extracts from the Journal of Mr. Wolff. "The Washington Theological Repertory and Churchman's Guide", № 1, vol. IV, August.
3. **Wolff** 1827, Memoir of the Rev. Joseph Wolff Missionary to the Jews: Comprising his first visit to Palestine in the years 1821 & 1822, Written by Himself. Edited and revised by John Bayford, Esq., F.S.A., second edition, London, published by James Duncan, Paternoster Row, and L. B. Seeley & Son, Fleet Street, 365 p.
4. **Wolff** 1828, Memoir of the Rev. Joseph Wolff Missionary to the Jews. Vol. II. Comprising his second visit to Palestine in the years 1823 & 1824. Published by James Duncan, Paternoster Row; L. B. Seeley & Son, and Burnside, Fleet Street, 392 p.
5. **Wolff** 1860, Travels and Adventures of the Rev. Joseph Wolff, D.D., LL.D: Late Missionary to the Jews and Muhammadans in Persia, Bokhara, Cashmeer, etc., London, Sounders, Otley and Co, vol. I, 538 p.

**Арцви Г. Бахчинян, Институт истории НАН, к.ф.н.,
Свидетельства об армянах Ближнего Востока в путевых
записках Джозефа Вольфа (1827-1828 гг.)**

Резюме

Британский миссионер еврейского происхождения Джозеф Вольф (1795-1862) предпринял свою первую миссионерскую поездку по различным регионам Ближнего Востока в начале 1820-х годов. В своем травелоге «Мемуары реверенда Джозефа Вольфа, миссионера среди евреев» (т. 1-3, 1827-1829) он описал свое общение с различными народами региона, в том числе с армянами.

Этот до сих пор остававшийся неизвестным арменоведам ценный источник содержит сведения об армянском населении Ближнего Востока в первой половине XIX века (Иерусалим, Сирия, Ливан, Верхняя Месопотамия, Ирак) и, в частности, об армянских религиозных центрах. В редких случаях он указывает численность армян того или иного населённого пункта (количество лиц или семей), что предоставляет дополнительные свидетельства для восстановления демографической картины армян региона в тот период.

Наряду с общеизвестными фактами Джозеф Вольф оставил свидетельства о некоторых небольших армянских поселениях (Бир, Амуда, Кермуш), а также упомянул нескольких выдающихся армянских деятелей своего времени (в основном – представителей духовенства). Ценными являются также его наблюдения об интерконфессиональных отношениях среди армян

Ближнего Востока и их стремлении к библейской грамотности.

Ключевые слова: Джозеф Вольф, миссионер, путевые заметки, армянские общины, Ближний Восток, Месопотамия, Ливан, Иерусалим, религиозные дебаты.

Artsvi H. Bakhchinyan, Institute of History of National Academy of Sciences of Republic of Armenia, PhD in Philology, Accounts of Armenians in the Near East in Joseph Wolff's 1827-1828 Travelogue

Summary

The British missionary of Jewish origin, Joseph Wolff (1795-1862), undertook his first missionary journey across various regions of the Near East in the early 1820s. In his travelogue *Memoir of the Rev. Joseph Wolff, Missionary to the Jews* (vols. 1-3, 1827-1829), he described his interactions with different peoples of the region, including Armenians.

This valuable source, which has so far remained unknown to Armenian scholars, contains information about the Armenian population of the Near East (Jerusalem, Syria, Lebanon, Upper Mesopotamia, Iraq) in the first half of the 19th century and, in particular, about Armenian religious centers. In rare cases, he provides data on the number of Armenians in specific settlements (counting individuals or families), offering additional evidence for reconstructing the demographic landscape of Armenians in the region during that period.

In addition to well-known facts, Joseph Wolff recorded

information about several small Armenian settlements (Bir, Amuda, Kermush) and mentioned a number of prominent Armenian figures of his time, mainly members of the clergy. His observations of interdenominational relations among Middle Eastern Armenians and their aspirations for biblical literacy are also of great value.

Key words: Joseph Wolff, missionary, travelogue, Armenian communities, Near East, Mesopotamia, Lebanon, Jerusalem, religious debates.

ԼԻԼԻԹ ՀՐ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., դրցենս

lilithovannisan@yahoo.com

ID 0009-0007-7896-3922

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-89

ԱՐԵՎՄՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ

1878 թ. ԾՐԱԳՐԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ

ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ (1996-2018)*

Ամփոփում

1877-1878 թթ. ռուս-թուրքական պատերազմում ռուսական բանակի հաղթանակն ամրապնդեց ռուսական պետության դիրքերը միջազգային ասպարեզում: Պատերազմի՝ ամփոփման ենթակա արդյունքներից էր Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցը:

1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեռլինի հաշտության բանակցություններում սովթանական կառավարության գիտությամբ և թույլտվությամբ Կոստանդնուպոլսի Հայոց պատրիարք Ներսես Բ Վարժապետյանը, Վանի հոգևոր առաջնորդ Մկրտիչ (Հայրիկ) Խրիմյանը, բարձրաստիճան հոգևորական Խորեն Նարբեյը (Խորեն Գալֆայան) և Երիտասարդ ձեռնարկատեր Պողոս Նուբարը բարձրացրին Օսմանյան կայսրության սահմաններում Արևմտյան Հա-

* Ներկայացվել է 14.II.2025 թ., գրախոսվել է 18.II.2025 թ., ընդունվել է դրագրության 20.VI.2025 թ.:

յաստանի ինքնավարության հարցը: Պատմաբանների գնահատմամբ, նրանց ծրագրերին բնորոշ էին «խեղճությունը», «համեստությունը», իրականացման «երերուն մեխանիզմները», որոնք բացատրվում են թուրքահպատակ հայի հոգեբանական գործոնով: Ավելին, հայ գործիչների ծրագրային ձևակերպումները փոխամածայնեցված չեն, գործողություններն անհետևառական էին ու անվճռական, ինչի հետևանքով մեծ տերությունները դրանց լուրջ չեն վերաբերվում, իսկ օսմանյան կառավարությունը հայ գործիչների ջանքերն օգտագործում էր մեծ տերությունների և հայ ազգային շրջանակների իրական շահերն ու հետաքրքրությունները շոշափելու համար:

Մեծ տերությունների քաղաքականության թալանչիական էության և սովորանական կառավարության հակահայկական քաղաքականության հետ մեկտեղ միջազգային ատյաններում Հայկական հարցը բարձրացնող հայ գործիչների դիվանագիտական ունակությունների և հմտությունների բացակայությունն Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը ձախողող հիմնական պատճառներից էր:

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Օսմանյան կայսրություն, ինքնավարություն, բանակցություններ, Մկրտիչ Խրիմյան, Ներսես Բ Վարժապետյան, Խորեն Նարբեյ, Պողոս Նուբար:

Ներածություն

1878 թ. Սան Ստեֆանոյի և Բեղլինի պայմանագրերով Արևմտյան Հայաստանի հարցը միջազգայնացվեց: Հույսը

դնելով արտաքին ուժերի վրա և անպատրաստ լինելով զինված պայքարի՝ հայ ժողովուրդն անկարող էր եղել օգտվել 1875–1876 թթ. Բալկանյան ճգնաժամի, ապա 1877–1878 թթ. ռուս–թուրքական պատերազմի շնորհիվ ստեղծված միջազգային բարեպատեհ իրադրությունից և կազմակերպել համընդիանուր զինված հակաթուրքական ապստամբություն։ Այդ պատճառով էլ պատերազմից հետո նրա ակնկալիքն օսմանյան իշխանություններից և միջազգային դիվանագիտությունից ինքնավարությունն էր Օսմանյան կայսրության կազմում։

1878 թ. Արևմտյան Հայաստանի ինքնավարության ծրագրերը հայաստանյան պատմագիտության մեջ վերլուծված և արժևորված են Հայկական հարցի բազմաշերտ պատմության համատեքստում։ Մասնավորապես, Գ. Գալոյանը, Է. Կոստանդյանը, Ռ. Հովհաննիսյանը, Վ. Թունյանը, Ա. Մարությանը, Ս. Պողոսյանը վերարժենորել են XIX դ. վերջին քառորդին եվրոպական տերությունների հետ աշխատելու ուղղությամբ հայ գործիչների մոտեցումների ուժեղ և թույլ կողմերը, արտաքին իրադրության փոփոխությունները հաշվարկելու և հօգուտ ազգային շահերի օգտագործելու նրանց ճկունությունը, դրան խոչընդոտող գործոնները, նորահայտ վավերագրերի հիման վրա ներկայացրել ու գնահատել են Հայկական հարցում մեծ տերությունների շահերն ու հետաքրքրությունները, կիրառած դիվանագիտական հնարքները։

Արևմտյան Հայաստանի կարգավիճակի հարցը ռուսական կողմի հետ Ներսես Բ Վարժապետյանի և Մկրտիչ Խրիմյանի բանակցություններում

1878 թ. փետրվարի 19 (մարտի 3)-ին ստորագրված Սան Ստեֆանոյի հաշտության նախնական պայմանագիրն էապես ամրապնդում էր Ռուսաստանի ռազմաքաղաքական դիրքերը միջազգային ասպարեզում¹, իսկ Օսմանյան կայսրությունը Ենթարկվում էր մասնակի բաժանման²: Թուրքահպատակ քրիստոնյա ժողովուրդները պաշտպանում էին Ռուսաստանի նվաճողական քաղաքականությունը՝ այն համարելով թուրքական բռնակալությունից ազատվելու իրենց հնարավորություններից մեկը³: Եվրոպական տերությունները Սան Ստեֆանոյի նախնական հաշտության պայմանագիրը դիտում էին որպես իրենց շահերի դեմ ուղղված պայմանագիր՝ պահանջելով վերանայել այն: Հայկական շահի տեսանկյունից Սան Ստեֆանոյի պայմանագիրն առաջինն է, որով Հայկական հարցը դարձավ միջազգային քննարկման առարկա: Թուրքիան ընդունում էր Հայաստան աշխարհագրական և պատմական տարածքի գոյությունն իր նվաճած երկրների շարքում⁴:

¹ Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). 1972, 83-98: Сб.н. նաև Сборник договоров России с другими государствами (1856-1917). 1952, 159-175.

² **Դүնյան**. 1997, 3.

³ **Պողոսյան**. 2018, 11:

⁴ **Գալոյան**. 2004, 266; **Կոստանդյան**, **Հովհաննիսյան**. 2010, 435-436:

Ոռուաստանը, այնուամենայնիվ, չկարողացավ ամբողջությամբ և վերջնականորեն ամրապնդել իր ռազմական հաղթանակն ու ձեռքբերումները: Դրանք դարձան մեծ տերությունների դիվանագիտական շահարկումների ու խարդավանքների առարկա: Ավելին, Սան Ստեֆանոյի պայմանագրի 16-րդ հոդվածով, թուրքական կառավարության խորամանկ քայլերով, հայ և քուրդ ժողովուրդներն ինչոր առումով կանգնեցին միմյանց դեմ և ոչ թե կողը կողքի⁵:

Սովորանի կառավարությունն օգտագործում էր հայկական գործոնը, որպես զոնդաժի միջոց. մի կողմից՝ հայ ազգային շրջանակների, մյուս կողմից՝ մեծ տերությունների իրական շահերն ու հետաքրքրությունները շոշափելու նպատակով⁶: Սան Ստեֆանոյի բանակցությունների ընթացքում սովորան Արդուլ Համիդ II-ի գիտությամբ այնտեղ

⁵ Կոստանդիան, Հովհաննիսյան. 2010, 436:

⁶ Դանիելյան. 2007, 77-84: Այդ ժամանակ արևմտահայ հասարակական-քաղաքական գործիչների վերնախավում ծևավորվել էին մի քանի ուղղություններ, որոնցից յուրաքանչյուրը Հայկական հարցի լուծումը կապում էր կոնկրետ մեծ տերության հետ: Բարձրաստիճան հիգնորականներ Խորեն Նարեկը և Մատթեոս Իզմիրյանը գտնում էին, որ միայն Ռուսաստանը կարող էր դիմակայել Թուրքային, մանավանդ, որ պատերազմը սկսվել էր քրիստոնյաների ազատության կարգախոսով: Իսկ Մկրտիչ Խրիմյանի և Գրիգոր Օոյյանի համոզմամբ, Հայկական հարցի լուծումն ուղղակիորեն կապված էր Անգլիայի մերձավորարևելյան շահերի ու քաղաքականության հետ: Նաև կային թուրքական կառավարության հետ անմիջական բանակցություններ վարելու կողմնակիցներ, որոնք «թուրքական պետական ապարատում և տնտեսության մեջ պաշտոններ գրաված անձինք էին՝ էֆենդիական դասի մարդիկ» (Կոստանդիան, Հովհաննիսյան. 2010, 431):

Էին գտնվում Հայոց ազգային ժողովի կողմից լիազորված պատվիրակությունը՝ Ներսես Բ Վարժապետյանի գլխավորությամբ, և Մկրտիչ Խրիմյանի պատվիրակությունը: Հայ գործիչները բանակցություններ էին վարում ռուսական պատվիրակության ղեկավարի՝ Թուրքիայում Ռուսաստանի նախկին դեսպան Նիկոլայ Իգնատևի հետ, «հայկական անկախ պետություն» ստեղծելու վերաբերյալ: Սակայն վերջինս չխոստացավ պաշտպանել այդ գաղափարը Բեռլինի վեհաժողովում⁷: Շեշտելով այս տեղեկության հավաստիությունը՝ Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ դրա պատճառն անզիհական դիվանագիտության թուրքանպատ միջամտությունն էր⁸: Այնուհետև, անդրադառնալով սովթանի կողմից Ն. Վարժապետյանի և Մ. Խրիմյանի մեկնումը Սան Ստեֆանո թույլատրելու նպատակներին՝ պատմաբանը նշում է, որ նա «այդ քայլով նպատակ է ունեցել իր համար պարզելու, թե հայերը վերջնականապես ինչի են ծգտում»⁹: Հարցն այն է, որ պատրիարքը մշտապես հավաստիացնում էր սովթանին, որ հայերն անջատողական ծգտումներ չունեն: Դրանով Ն. Վարժապետյանն արտահայտում էր իր անձնական տեսակետը, որն աղերս չուներ արևմտահայության ազատագրական ծգտումների հետ:

⁷ Salahi. 1987, 47.

⁸ Գալոյան. 2004, 265:

⁹ Գալոյան. 2004, 265:

Ներսես Բ Վարժապետյանի «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիրը»

Ն. Իգնատևի հետ բանակցություններից հետո Ն. Վարժապետյանի գլխավորությամբ ստեղծված հանձնախումբը պատրաստեց «Օսմանյան Հայաստանի կազմակերպական կանոնագրի ծրագիր», որն արտահայտում էր մի կողմից պատրիարքի, իսկ մյուս կողմից՝ ռուսական դիվանագիտության զուապ ու զգուշավոր դիրքորոշումը հայկական վիլայեթների իրավական կարգավիճակի հարցում: Այդ ծրագիրը 1878 թ. մարտի 15-ին արքեպիսկոպոս Խ. Նարբեյը Պետերբուրգում ներկայացրեց ցար Ալեքսանդր II-ին¹⁰:

Ըստ Ն. Վարժապետյանի ծրագրի, Հայաստանն ունենալու էր ցարի համաձայնությամբ սուլթանի կողմից ընտրված հայ-լուսավորչական ընդհանուր կառավարիչ: Հայաստանի նահանգապետերը և գավառապետերը ևս լուսավորչական էին լինելու: Նրանց ընտրելու էր Հայոց ազգային ժողովը, իսկ պաշտոններում հաստատելու էր սուլթանը: Հայաստանի ոստիկանությունը կազմվելու էր հայերից: Արդարադատությունը ևս իրականացնելու էին հայերը՝ շարիաթի սկզբունքներից ազատ: Վերացվում էին քրդերի բոլոր արտօնությունները: Հարկերի բաշխման հիմքում դրվելու էր արդարության սկզբունքը: Հայերի խախտված հողային իրավունքները վերականգնվելու էին: Հայաստանում թուրքերը զինաթափվելու էին: Հայաստանն ունենալու էր Ռուսաստանի հավանությամբ սուլթանի կող-

¹⁰ ԼՅօ. 1915, 60-63:

մից վավերացված վարչական նոր կանոնադրություն: Երաշխավորվելու էր Զեյթոնի ինքնավարությունը¹¹:

Փաստորեն, ըստ ներկայացված ծրագրի, ինքնավարություն ստանալու դեպքում Արևմտյան Հայաստանը դրվելու էր Թուրքիայի և Ռուսաստանի համատեղ կառավարման ներք՝ մնալով Օսմանյան կայսրության կազմում, այսինքն՝ Հայկական հարցն արմատապես չէր լուծվելու: Այսպիսով, «սովթանը համոզվեց, որ պատրիարքը կամ դիվանագիտություն էր խաղում, կամ, իրոք, չգիտեր, թե ինչի են ձգտում արևմտահայերը»¹², - եզրակացնում է Գ. Գալոյանը: Պատմաբանի գնահատմամբ, Պատրիարքարանի ծրագրի «խեղճությունը բացատրվում էր արևմտահայերի հոգեբանական գործոնով»¹³: Դարեր շարունակ ապրելով Օսմանյան կայսրությունում, նրանց համար դեռևս դժվարամարս էր Արևմտյան Հայաստանի ինքնավարության գաղափարը: XIX դ. երկրորդ կեսին, երբ առաջին անգամ էր բարձրացվում այդ հարցը, ընդգծվում էր Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն ստանալու պահանջը: Արևմտահայ մտավորականության մի ստվար մասը կարծում էր, թե առանց ապստամբության, սովորական ողորմածությամբ հայերը կարող են ձեռք բերել քաղաքական և քաղաքացիական ազատություններ¹⁴: Գ. Գալոյանի բնութագրմամբ, «չգիտես ում կողմից

¹¹ **Leto.** 1915, 61-62:

¹² **Գալոյան.** 2004, 265, 272:

¹³ **Գալոյան.** 2004, 270:

¹⁴ **Գալոյան.** 2004, 270:

լիազորված», «պետություն չներկայացնող» Պողոս Նուբար փաշայի ծրագիրն էլ չէր համաձայնեցվել պատրիարքի հետ: Դրանում անգամ ակնարկ չկար Արևմտյան Հայաստանի ինքնավարության մասին, գլխավոր պահանջը հանգում էր Երկրամասում Եվրոպական տերությունների հովանավորությամբ հայ նահանգապետի նշանակմանը¹⁵: Այդ ծրագիրը մեծ տերություններին ներկայացնելու և նրանց աջակցությունը ստանալու առաքելությամբ Պողոս Նուբարը մեկնել էր Եվրոպա: Նշված երկու ծրագրերը փոխհամաձայնեցված չէին, դրանցում առկա էր ծևակերպումների անհետևողականություն, անտեսված էր ազատատենչ ժողովրդին վճռական պայքարի մղելու գործոնը: Դրանք լուրջ տարածայնություններ առաջացրին հայ հասարակության մեջ՝ պառակտելով ու ջլատելով նրա ուժերը: Պատահական չէ, որ այդ ծրագրերը լրջությամբ չընդունեց հասցեատերերից և ոչ մեկը, թեև նրանք արտաքուստ «բարյացակամությամբ» ծանոթացան դրանց¹⁶: Միննույն ժամանակ, Ն. Վարժապետյանի ծրագրի նկատմամբ բացասական վերաբերմունք ուներ Ամենայն հայոց կաթողիկոս Գևորգ ԴԿոստանդնուպոլսեցին (1866–1882), քանի որ մի կողմից՝ քաջատեղյակ էր ոռաական արքունիքի տրամադրվածությանը Հայկական հարցում և Մ. Խրիմյանի առաքելության

¹⁵1877 թ. Բովլղարական հարցի քննարկման ժամանակ Գերմանիայի կանցլեր Օտտո ֆոն Բիսմարկը տերություններին առաջարկել էր Բովլղարիայի կառավարիչ նշանակել Նուբար փաշային, ինչը դրական արձագանք էր ունեցել, սակայն չիրականացավ ոուսթուքական պատերազմի հետևանքով (**Պողոսյան.** 2018, 77):

¹⁶ **Գալյուան.** 2004, 271:

նկատմամբ, մյուս կողմից էլ վիրավորված էր, որ Ն. Վարժապետյանն իրեն չէր ներգրավել ծրագրի կազմմանն ու չէր տեղեկացրել իս. Նարբեյի առաքելության մասին: Ի դեպ, այս փաստի առիթով Գ. Գալոյանն իրավացիորեն նկատում է, որ «հայ գործիչներից շատերի մեջ միշտ էլ սեփական պատվախնդրությունը բարձր է դասվել ազգի շահերից»¹⁷: Իսկ Ս. Պողոսյանը հավելում է, որ հայ ազդեցիկ գործիչներից շատերի սնափառությունն ու անզիջում կեցվածքը թույլ չտվեցին ընդունել և օգտագործել Պողոս Նուբարի դիվանագիտական ընդունակությունները¹⁸: Պատմաբանների անկեղծ ընդհանրացումը, ցավոք, բնութագրական է նաև մեր օրերում:

Արևմտյան Հայաստանի ապագա կարգավիճակի հարցում հայ գործիչների անմիաբանության հետևանքները

Գ. Գալոյանի համոզմամբ, Աբդուլ Համիդը քաջատեղյակ էր իս. Նարբեյի ու Մ. Խրիմյանի առաքելություններին և հեռատեսորեն չէր խոչընդոտել դրանց ընթացքը՝ հասկանալով, որ «Երկու լարերի վրա հայ գործիչների խաղը ոչ միայն գրգռելու էր Եվրոպական տերություններին և Ռուսաստանին միմյանց դեմ, այլև բոլորի անվտահությունն էր առաջացնելու հայերի անկեղծության նկատմամբ: Բացի այդ ... Աբդուլ Համիդը ձգտում էր ստեղծել տպավորություն, որ հայերը, դիմելով Եվրոպական տերություննե-

¹⁷ Գալոյան. 2004, 272:

¹⁸ Պողոսյան. 2018, 93:

րին, ... ձգտում էին հասնել Սան Ստեֆանոյի պայմանագրի փոփոխմանը, որպեսզի իրենց բախտի տնօրինությունը չտրվեր միայն Ռուսաստանին»¹⁹:

Աբդուլ Համիդի հաշվարկները սխալ դուրս չեկան. ո՞չ Ռուսաստանը և ո՞չ էլ արևմտաԵվրոպական որևէ տերություն չխոստացան պաշտպանել Հայ դատը Բեռլինի վեհաժողովում: Տեղյակ չլինելով մեծ տերությունների դիվանագիտական «խաղերին»՝ Ն. Վարժապետյանը, Խ. Նարբեյը և Մ. Խրիմյանն այդպես էլ չկարողացան ընկալել, որ Հայկական հարցում անգլիական կառավարության դիրքորոշումը հակահայկական էր²⁰: Այս առիթով Գ. Գալոյանը նկատում է, որ անգլիական կառավարությունը, չխոչընդոտելով հայ պատվիրակների գործունեությանը, հետապնդում էր «մշուշապատ խոստումներով մոլորության մեջ գցելու միջոցով» արևմտահայերին «Ռուսաստանից կտրելու» նպատակ²¹: Եվ սա այն դեպքում, երբ Մ. Խրիմյանի և Խ. Նարբեյի գործունեությունը «երկակի խաղի» տպավորություն էր թողնում Եվրոպական դիվանագիտական շրջանակներում: Հարցն այն է, որ Խ. Նարբեյը պատրիարքից հանձնարարություն ուներ համոզել ռուսական կայսրին, որ հայերի միակ հույսը Ռուսաստանն է, մինչդեռ թուրքական և անգլիական իշխանությունները կասկածում էին, թե Ն. Վարժապետյանը գաղտնի կապերի մեջ էր

¹⁹ Գալոյան. 2004, 273; Գալոյան. 1996, 3-18; Գալոյան. 1997, 7-21; Պողոսյան. 2007, 36-48:

²⁰ Գալոյան. 2004, 280-281, 285-286, 287, 289-290; Կոստանդյան, Հովհաննիսյան. 2010, 442:

²¹ Գալոյան. 2004, 287:

ոռւսների հետ, իսկ ոռւս գործիչները պատրիարքին համարում էին Անգլիայի և սովորանի դրածո²²:

Միայն Բեղլինի վեհաժողովից հետո հայերը համոզվեցին, որ Անգլիան անկեղծ չէր իրենց նկատմամբ, իսկ Ռուսաստանը շահագրգոված չէր, որպեսզի Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տրվեր, քանի որ դրա բնականոն հետևանքը կարող էր լինել Միացյալ և Անկախ Հայաստանի ստեղծումը, և Ռուսաստանը կզրկվեր Արևելյան Հայաստանից²³: Բեղլինի վեհաժողովիւմ Անգլիան Կիպրոսի անեքսիայի դիմաց իր պարտքը վճարեց Թուրքիային՝ առանց մտահոգվելու, թե ինչ կլիներ այդ դեպքում հայերի հետ²⁴: Ըստ Էռլթյան, բարենորոգումներ անցկացնելը թողնվեց Աբդով Համիդի հայեցողությանը: Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու հարցը նոյնիսկ քննարկման չդրվեց²⁵: Բեղլինի պայմանագրի 61-րդ հոդվածին լրացնելու էր գալիս 62-րդ հոդվածը, ըստ որի, Օսմանյան կայսրության տարածքում դավանության տարբերությունը չէր կարող առիթ տալ որևէ հպատակի իրավունքները զանց առնելու բոլոր այն հարցերում, որոնք վերաբերում էին քաղաքացիական և քաղաքական իրավունքներից օգտվելու, հանրային պաշտոններ վարելու, պաշտոնական գործեր կատարելու կամ տարբեր ազատ մասնա-

²² Գալրյան. 2004, 289-290:

²³ Գալրյան. 2004, 290:

²⁴ Գալրյան. 2004, 294:

²⁵ Գալրյան. 2004, 296:

գիտություններով և արհեստներով զբաղվելու հնարավորությանը:

Բացի այդ, բոլոր հպատակներին, առանց կրոնական խտրության, թույլատրվում էր ազատ վկայություն տալ դատարանում²⁶: Եվրոպական տերությունները՝ առաջին հերթին Անգլիան, Ռուսաստանին զրկելով Հայկական հարցում ունեցած մենաշնորհից և վերացնելով Սան Ստեֆանոյի պայմանագրով նախատեսված բարենորոգումների իրականացման հստակ երաշխիք հանդիսացող 25-րդ և 27-րդ հոդվածները, Բեռլինի պայմանագրում չառաջարկեցին նման երաշխիքային հոդվածներ, ինչը թուրքական իշխանություններին հնարավորություն տվեց ոչինչ չձեռնարկել 61-րդ և 62-րդ հոդվածների կատարման ուղղությամբ²⁷: 1879 թ. հունվարի 27-ին Կոստանդնուպոլիսի ռուս-թուրքական «Խաղաղության մասին» վերջնական պայմանագրով վերահաստատվեցին Սան Ստեֆանոյի պայմանագրի 17-րդ և 27-րդ հոդվածները, որոնք Բեռլինի պայմանագրով չեն վերացվել ու փոփոխության չեն ենթարկվել²⁸:

Հայ պատվիրակների գործունեության անմիաբանությունը վկայում էր հայկական գործոնի թուլության և անկազմակերպվածության մասին: Բեռլինի վեհաժողովին ներկայացվեց երկու հայկական ծրագիր՝ Մ. Խրիմյանինը և Խ. Նարեկյանը, ինչպես նաև Պողոս Նուբար փաշայի ծրա-

²⁶Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովորական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828-1923). 1972, 128-129:

²⁷ Մարտության. 2014, 61:

²⁸ Մարտության. 2014, 62:

գիրը: Դրանցից առաջինը հանգում էր Օսմանյան կայսրության սահմաններում ինքնավար Հայաստանի և Կիլիկիայի ստեղծմանը Եվրոպական հովանավորության ներքո՝ դրանում ներառելով բարենորոգվելիք հայկական նահանգները, Էրզրումի ու Վանի վիլայեթները, Դիարբեքիրի վիլայեթի հյուսիսային մասը, Արդնի սանջակը, Սղերդի սանջակի հյուսիսային մասը և Տրապիզոնի ու Բաթումի միջև գտնվող Ռիզե նավահանգիստը, որտեղ հայ բնակչությունը բացարձակ մեծամասնություն էր կազմում: Ըստ Երկրորդի, նախատեսվում էր Արևմտյան Հայաստանում կատարել բարենորոգումներ՝ ուղղված արևմտահայերի անձնական և գույքային իրավունքների պաշտպանությանը: Առաջարկվող բարենորոգումներն էլ խիստ չափավոր էին և իրականանալի:

Եզրակացություններ

Արևմտյան Հայաստանի ազատագրման վերաբերյալ հայ գործիչների մոտեցումների ու կազմած ծրագրերի տարբերությունները պայմանավորված էին օսմանյան «ժառանգության» բաժանման հարցում մեծ տերությունների դիրքորոշմամբ ու հակասություններով²⁹: Հայկական գործոնը զրոյական դերակատարում ուներ Սան Ստեֆանոյի ու Բեոլինի պայմանագրերում Արևմտյան Հայաստանին և արևմտահայությանը վերաբերող հոդվածների ձևակերպման գործում: Միևնույն ժամանակ հայ գործիչները հույս ունեին Եվրոպական մեծ պետությունների օգնութ-

²⁹ **Түннян.** 1998, 76, 102-108.

յամբ ազատվել թուրքական դժնիակ լծից, ստանալ ինքնավարություն, իսկ հետագայում, ինչու չէ, հասնել անկախության: Սակայն ժամանակը ցույց տվեց, որ հայ ժողովուրդը ճիշտ չէր կողմնորոշվում միջազգային բարդ ու խճճված հարաբերություններում, քանի որ պետականության երկարատև բացակայության պայմաններում չուներ պատրաստված դիվանագետներ:

Արևմտահայության հոգևոր և քաղաքական ղեկավարությունը ստանձնած Կ. Պոլսի Պատրիարքարանը դեմ էր հայերի զինված ելույթներին՝ հուսալով, որ «Օսմանյան հայրենիքին» ցուցաբերած հավատարմության և մեծ պետությունների աջակցության շնորհիվ հայ ժողովրդին կտրվի սպասված ինքնավարությունը, բայց չարչար սխալվեցին³⁰: Մեծ տերությունների քաղաքականության թալանչիական էռության և սովորական կառավարության հակահայկական քաղաքականության հետ մեկտեղ միջազգային ատյաններում Հայկական հարցը բարձրացնող հայ գործիչների դիվանագիտական ունակությունների և հմտությունների բացակայությունն Արևմտյան Հայաստանի հարցի լուծումը ձախողող հիմնական պատճառներից էր:

Գրականություն/References/Литература

1. **Գալոյան Գ.** 1996, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը Բեռլինի 1878 թվականի վեհաժո-

³⁰Պոլսիան. 2007, 48:

- ղովին նախորդող շրջանում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 3, էջ 3-18:
- Galoyan G.** 1996, Self-government problem in the Western Armenia on the eve of the Berlin congress in 1878, "Herald of the Social Sciences", Yerevan, № 3, pp. 3-18.
2. **Գալոյան Գ.** 1997, Արևմտյան Հայաստանի ինքնավարության հարցը 1878 թ. Բեռլինի վեհաժողովում, «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, № 1, էջ 7-21:
- Galoyan G.** 1997, Question of the West Armenian self-government at 1878 Berlin congress, "Herald of the Social Sciences", Yerevan, № 1, pp. 7-21.
3. **Գալոյան Գ.** 2004, Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում (XVI դարից 1917 թ.), Երևան, «Գիտություն», 822 էջ:
- Galoyan G.** 2004, Armenia in the global confrontations of the Great Powers (from the XVI century to 1917), Yerevan: Gitutyun, 822 p.
4. **Դանիելյան Է.** 2007, Թուրքիայի դերակատարությունը Հայկական հարցի միջազգայնացման գործընթացում (1876-1878 թթ.), «Բանբեր Երևանի համալսարանի», Երևան, № 2, էջ 77-84:
- Danielyan E.** 2007, The role of Turkey in the process of internationalization of the Armenian question (1876-1878), "Bulletin of Yerevan university", Yerevan, № 2, pp. 77-84.
5. **Լեօ.** 1915, Հայոց հարցի վաւերագրերը, Թիֆլիս, «Տպարան Ն. Աղանեանցի», 404 էջ:
- Leo.** 1915, Documents of the Armenian Question, Tiflis: Printing house of N. Aganyants, 404 p.
6. **Կոստանդյան Է., Հովհաննիսյան Ռ.** 2010, Հայկա-

կան հարցի միջազգայնացումը, «Հայոց պատմություն», h. III, գիրք առաջին (XVII դարի երկրորդ կես – XIX դարի վերջ), Երևան, «Զանգակ-97», էջ 429–447:

Kostandyan E., Hovhannisyan R. 2010, Internationalization of the Armenian Question, "History of Armenia", vol. III, first book (the second half of the XVII – the end of the XIX century), Yerevan: Zangak-97, pp. 429-447.

7. Հայաստանը միջազգային դիվանագիտության և սովետական արտաքին քաղաքականության փաստաթղթերում (1828–1923) 1972, խմբ.՝ պրոֆ. Զ. Կիրակոսյան, Երևան, «Հայաստան», 809 էջ:
Armenia in documents of international diplomacy and Soviet foreign policy (1828-1923) 1972, ed. by prof. J. Kirakosyan. Yerevan: Hayastan, 809 p.
8. **Մարուքյան Ա.** 2014, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հիմնախնդիրներն ու պատմաիրավական հիմնավորումները, Երևան, Պատմության ինստիտուտ, 332 էջ:
Marukyan A. 2014, Problems of overcoming the consequences of the Armenian Genocide: historical and legal grounds, Yerevan: Institute of History, 332 pp.
9. **Պողոսյան Ս.** 2007, Հայաստանի ինքնավարության ծրագրերը Սան Ստեֆանոյի և Բեռլինի կոնֆերանսների նախօրեին, «Էջմիածին» կրօնագիտական եւ հայագիտական ամսագիր, Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, Ապրիլ, էջ 36–48:
Poghosyan S. 2007, Plans of Armenian sovereignty on the eve of the conferences of San Stefano and Berlin, "Etchmiadzin" Journal of religious and armenological studies, The Mother See of Holy Etchmiadzin, April, pp. 36-48.

10. **Պողոսյան Ս.** 2018, Հայաստանի ինքնավարության ծրագրերը 1878 թ., Երևան, «Տիր», 144 էջ:
Poghosyan S. 2018, Plans for the autonomy of Armenia in 1878, Yerevan: Tir, 144 pp.
11. Сборник договоров России с другими государствами (1856-1917) 1952. Сост. И. В. Козьменко. Под ред. Е. А. Адамова. Москва, "Госполитиздат", 463 с.
Collection of treaties of Russia with other states (1856-1917) 1952, Comp. by I.V. Kozmenko, edited by E.A. Adamov, Moscow: Gospolitizdat, 463 p.
12. **Тунян В.** 1997, Россия и Армения 1878-1897, Ереван, "Амарас", 119 с.
Tunyan V. 1997, Russia and Armenia 1878-1897, Yerevan: Amaras, 119 p.
13. **Тунян В.** 1998, Россия и Армянский вопрос, Ереван, "Амарас", 241 с.
Tunyan V. 1998, Russia and the Armenian Question, Yerevan: Amaras, 241 p.
14. **Salahi S.** 1987, The Ottoman Armenians. Victims of Great Power Diplomacy, London, K. Rustem and Brother, 426 p.

Лилит Гр. Оганисян, Институт истории НАН РА, к.и.н., доцент, Планы автономии Западной Армении 1878 года в оценках армянской историографии (1996-2018)

Резюме

Победа русской армии в русско-турецкой войне 1877-1878 годов значительно укрепила позиции России на международной арене. Одним из итогов войны стал вопрос о статусе Западной

Армении, часть которой временно оказалась под контролем России.

В 1878 году, во время мирных переговоров в Сан-Стефано, а затем накануне Берлинского конгресса, Армянский патриарх Константинополя Нерсес II Варжапетян, духовный лидер Вана Мкртич (Айрик) Хримян, высокопоставленный священник Хорен Нарбей (Хорен Галфаян), а также молодой предприниматель Погос Нубар - с разрешения султанского правительства – подняли вопрос об автономии Западной Армении в границах Османской империи. По мнению историков (Г. Галоян, Э. Костандян, Р. Оганисян, С. Погосян), их инициативы отличались ограниченными ресурсами, скромными масштабами и неопределенностью действий. Кроме того, выдвинутые требования армянских деятелей не были согласованы между собой; их действия отличались непоследовательностью и нерешительностью. Это привело к тому, что великие державы не воспринимали инициативу всерьез, а османское правительство использовало эти попытки как средство дипломатического зондажа.

Наряду с экспансионистской политикой великих держав и антиармянским курсом султанского правительства, отсутствие дипломатического опыта у армянских деятелей, поднимавших армянский вопрос на международной арене, стало одной из главных причин провала в решении вопроса Западной Армении.

Ключевые слова: Западная Армения, Османская империя, автономия, переговоры, Мкртич Хримян, Нерсес II Варжапетян, Хорен Нарбей, Погос Нубар.

**Lilit Hr. Hovhannisyan, Institute of History of the NAS RA,
Ph.D in History, Associate Professor, Plans for the Autonomy of
Western Armenia in 1878: Assessments in Armenian
Historiography (1996-2018)**

Summary

The victory of the Russian army in the Russo-Turkish war of 1877-1878 significantly strengthened the position of Russia on the international stage. One of the outcomes of the war was the issue of the status of Western Armenia, part of which had come temporarily under Russian control.

In 1878, during the peace negotiations in San Stefano and later on the eve of the Berlin Congress, several Armenian leaders - including the Armenian Patriarch of Constantinople Nerses II Varzhapetyan, the spiritual leader of Van Mkrtich (Hayrik) Khrimyan, high-ranking priest Khoren Narbey (Khoren Galfayan), and the young entrepreneur Boghos Nubar - raised the issue of autonomy for Western Armenia within the borders of the Ottoman Empire, with the permission of the Ottoman government.

According to historians (G. Galoyan, E. Kostandyan, R. Hovhannisyan, S. Poghosyan), their plans were characterized by a lack of resources, limited scale, and an unclear strategy for implementation. Moreover their proposals were uncoordinated, and their actions were marked by inconsistency and indecisiveness. As a result, the great powers did not take the initiative seriously, while the Ottoman authorities exploited it as a tool for diplomatic probing.

In addition to the exploitative policies of the great powers and the anti-Armenian stance of the Sultan's government, the lack of diplomatic experience among the Armenian representatives advocating the Armenian cause on the international stage was one of

the main reasons for the failure to resolve the issue of Western Armenia.

Key words: Western Armenia, Ottoman Empire, autonomy, Mkrtich Khrimyan, Nerses II Varzhapetyan, Khoren Narbey, Boghos Nubar.

ՄԱՐԻԱՄ Վ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, բ. գ. թ.

mariamhovsepian@mail.ru

ID 0009-0005-9696-4246

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-110

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏԻՏԵՍԿԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ «ՃԱԿԱՏԱՄԱՐՏ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ (1918-1920) *

Ամփոփում

Հայաստանի Առաջին Հանրապետության առջև ծառացած էին բազմաթիվ խնդիրներ: Սովոր, համաճարակը, հիվանդությունները, աղքատությունը և գաղթականների առկայությունը գումարվում էին նորաստեղծ երկրի գոյատևմանը սպառնացող աշխարհաքաղաքական բարդ իրավիճակին: Տնտեսական հիմնահարցերի լուծման համար անհրաժեշտ էր դիվանագիտական և գործնական կապեր հաստատել Հայաստանի հանդեպ ոչ այնքան բարյացակամ, ավելի շուտ՝ թշնամաբար տրամադրված հարևան պետությունների հետ: Պետականաշխնությունը զրոյից էր սկսվում, և սխալներն ու թերություններն անխուսափելի էին: 1918-1920 թթ. հաղթահարելով հաճախ անլուծելի համարվող դժվարությունները՝ Հայաստանի Առաջին Հանրա-

* Ներկայացվել է 20.II.2025 թ., գրախոսվել է 25.II.2025 թ., ընդունվել է դպագրության 20.VI.2025 թ.:

պետության իշխանությունները կարողացան հաջողություններ գրանցել գրեթե բոլոր բնագավառներում և, մասնավորապես, սոցիալ-տնտեսական ոլորտում: Այս դժվարին ուղին արտացոլվել է ոչ միայն հանրապետական մամուլի էջերում, այլև Կ. Պոլսում հրատարակված հայկական պարբերականների, այդ թվում՝ «Ճակատամարտ» օրաթերթի հրապարակումներում: Այս թերթն աչքի էր ընկնում իր օբյեկտիվ ու անաշառ վերաբերմունքով հանրապետության դեկավարների աշխատանքը ներկայացնելիս և վերլուծելիս: Աշխատակիցների առավելապես ներողամիտ վերաբերմունքը նկատվող թերացումների ու սխալների նկատմամբ պայմանավորված էր հայոց պետականությունը պահպանելու ցանկությամբ: Խմբագրակազմը կարծում էր, որ տարածաշրջանում բարենպաստ քաղաքական հանգամանքների դեպքում Հայաստանի դեկավարները ժամանակի ընթացքում կկարողանային լուծումներ գտնել ներքին ու արտաքին մարտահրավերների համար:

Բանալի բառեր՝ Մուղրոսի գինադադար, Հայկական հարց, պոլսահայ պարբերականներ, Հայաստանի Առաջին Հանրապետություն, «Ճակատամարտ» օրաթերթ, սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներ, Անկախության փոխառություն, Անդրհայկական երկաթուղի:

Ներածություն

1918 թ. հոկտեմբերի 30-ին կնքված Մուղրոսի գինադադարից¹ հետո Օսմանյան կայսրության մայրաքաղաքում

¹Թուրքիայի Հանրապետության պատմություն. 2014, 13:

հնարավորություն էր ստեղծվել իրատարակելու հայկական պարբերականներ: Դրանց մեծ մասն անդրադառնում էր հայության երկու հատվածներին մտահոգող տարաբնույթ ու կենսական հիմնահարցերին, ներկայացնում էին ցեղասպանության վերապրողների հուշերը, նրանց առօրյա խնդիրները և ազգային կառուցների կողմից իրականացվող հայապահպան ու որբախնամ աշխատանքները²: Առանձնահատուկ ուշադրության էին արժանանում Հայաստանի Առաջին Հանրապետության կյանքին նվիրված թղթակցությունները: Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական անցուդարձի մասին իր ամենօրյա իրապարակումներով առավել ամբողջական պատկերացում էր տալիս այն օրերին հայության շրջանում բարձր վարկանիշ ունեցող «Ճակատամարտ» օրաթերթը³: Դրանց միջոցով այսօր հնարավորություն ունենք օբյեկտիվ պատկերացում կազմելու, թե ցեղասպանությունից փրկված արևմտահայության մտավոր սերուցքի ներկայա-

²**Խառասույան.** 2015, 488:

³«Ճակատամարտ» օրաթերթը լուս է տեսել Կ. Պոլսում 1918-1924 թթ.: Այն կուսակցական իրատարակություն չի եղել, թեև իրատարակվել է ՀՅԴ աջակցությամբ: Այս օրաթերթի հիմնադիրները ՀՅԴ անդամներ էին, որոնք ցանկանում էին այդ պարբերականը դարձնել 1909-1915 թթ. Կ. Պոլսում տպագրված ՀՅԴ Արևմտյան թյուրոյի «Ազատամարտ» պաշտոնաթերթի իրավահաջորդը: Պարբերականի խմբագիրը Հակոբ Սիրունին էր (Ճոլոյան), պատասխանատու տնօրենները Շավարշ Միսաքյանն ու Մանուկ Ավանյանն էին, իսկ արտոնատերը Վրթանես Մարտիկյանն էր: Ունեցել է երեք անվանում՝ «Արիամարտ», «Արդարամարտ» և «Ճակատամարտ» (**Հռվեսեփյան.** 2009):

ցուցիչներն ի՞նչ դիրքորոշում էին որդեգրել Հայաստատանի Առաջին Հանրապետության և հայոց պետական կառուցների իրականացրած ներքին ու արտաքին քաղաքականության նկատմամբ: Այս տեսանկյունից կարող ենք փաստել, որ վերլուծական հոդվածների և առաջնորդող խմբագրականների մեջ կան սկզբնաբյուրային կարևորություն ունեցող հրապարակումներ, որոնք հայ հասարակության երկիրեղկվածության, հաճախ՝ պառակտվածության ու անմիասնականության ապացույց են:

Մեզանում այս թեմայի վերաբերյալ առկա է բավականաչափ հետաքրքիր հարցադրումներ պարունակող գրականություն: Հատկապես վերջին տասնամյակներին հրատարակվածների մեջ նորովի են վերլուծված 1918-1920 թթ. տարածաշրջանային իրադարձությունները, պետականության վերստեղծման հանգամանքները, պետականաշինության դժվարությունները, անկախության կորստին նպաստող աշխարհաքաղաքական անքարենպաստ հանգամանքներն ու իրադարձությունները, ինչպես նաև՝ այդ ամենի խորքային պատճառները⁴: Մեր ուսումնասիրության շրջանակում դրանց կանդրադառնանք՝ հիմնվելով առավելապես «Ճակատամարտի» վերլուծական հոդվածների վրա:

«Ճակատամարտի» մոտեցումները Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնահարցերին

⁴Գալստյան Ս. 2023; Հակոբյան Ա. 2005, Պետրոսյան Գ. 2003:

«Ճակատամարտի» էջերից վեր է հառնում հայաստանյան օրերի քրոնիկոնը: Բերենք օրինակներ: «Հայաստանի ազգաբնակչութիւնը զոհ կ'երթայ քաղցին ու բծաւոր ժանտատենդի համաճարակին: Օրական մօտ 2000 մարդ կը մեռնի»⁵, - կարդում ենք Հայաստանի խորհրդարանի նախագահ Ա. Սահակյանի՝ թերթում տպագրված դիմումի մեջ, որը նա ուղարկել էր դաշնակից երկրների խորհրդարանների նախագահներին: Թերթը թիֆլիսի «Հառաջ» թերթից արտատպել էր Հայաստանի ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանի հայտարարությունը երկրի իրավիճակի վերաբերյալ: Հ. Մանուկյանը «Ճակատամարտին» ուղարկած թղթակցության մեջ ներկայացնելով Հայաստանի սոսկայի կենսապայմանները՝ փաստում էր, որ հարևան Վրաստանն ու Ադրբեյջանը որոեգուել էին հակահայ քաղաքականություն: «Վրաստանի «դէմոկրատիկ» կառավարութիւնը, օգտուելով իր աշխարհագրական դիրքէն, փակեր է բոլոր ճամբանները Հայաստանի համար և թոյլ չի տար, որ մէկ ֆունտ ալիւր և երկու ֆունտ կենսամթերք իր սահմաններէն ներս մտնէ ու Հայաստան երթայ»⁶, - գրում էր թերթի թղթակիցը:

1919 թ. ապրիլին թերթը տեղեկացնում էր, որ «մթերքներ շատ-քիչ կը ստացուին»⁸: Մեծ էր գործազուրկ նպաս-

⁵«Ճակատամարտ». 1919, № 110:

⁶«Ճակատամարտ». 1919, № 110:

⁷«Ճակատամարտ». 1919, № 84:

⁸«Ճակատամարտ». 1919, № 120:

տառուների թիվը⁹: Սոցիալական անտանելի պայմանները հատկապես սուր էին զգում Հայաստանում ապաստան գտած արևմտահայ գաղթականները, որոնք զրկվել էին տունուտեղից, ապրուստի միջոցներից¹⁰:

Թերթի 1919 թ. մարտի 20-ի համարում տպագրված էր Հայաստանի ներքին գործերի նախարար Ա. Խատիսյանի հայտնած լուրը Երկրում տիրող կացության մասին: Դրա համաձայն՝ մեկ օրում Երևանում հավաքել էին 41 սովամահ եղածների դիակների¹¹: Ապրիլի 3-ին Երևանից կառավարական աղբյուրից ստացված հավաստի լուրով հայտնում էին համաճարակը կիսով չափ նվազելու մասին¹²: Բացի այդ՝ նշվում էր, որ Անգլիան և Միացյալ Նահանգներն սկսել էին կանոնավոր կերպով պարեն ներմուծել Հայաստան¹³: Մեկ ամիս անց «Ճակատամարտն» «Աշխատավոր» թերթից արտատպել էր Հայաստանի Առաջին Հանրապետության պարենավորման նախարար Ք. Վերմիշյանի պարզաբանումը, որտեղ նա հանգամանորեն ներկայացրել էր Երկրի կարգավորվող պարենավորման վիճակը¹⁴:

Պետական կառուցների ծևավորումը, ծրագրերն ու աշխատանքները, խնդիրներն ու դրանց վերացման ուղղությամբ գործադրվող ջանքերը գտնվել են «Ճակատա-

⁹Գալստյան. 2023, 44:

¹⁰Հովսեփյան. 2020, 84-86:

¹¹«Ճակատամարտ». 1919, № 110:

¹²«Ճակատամարտ». 1919, № 120:

¹³«Ճակատամարտ». 1919, № 120:

¹⁴«Ճակատամարտ». 1919, № 193:

մարտի» ուշադրության կենտրոնում: Թղթակցության, վերլուծական հոդվածի, հարցազրույցի, հեռագրի ու նամակի, հաճախ նաև հայաստանյան ու Թիֆլիսում տպագրվող հայ մամուլից արված արտատպումների միջոցով թերթը փորձել է իր ընթերցողներին օբյեկտիվ պատկերացում տալ Հայաստանի Առաջին Հանրապետության կյանքի, հոգսերի ու դժվարությունների մասին: Եթե 1918-1919 թթ. թերթում հիմնականում սովին, համաճարակներին, ապրուստին, նիստուկացին առնչվող նյութերն էին գերակշռում, որոնք զուգորդվում էին արտաքին աշխարհի հետ նորանկախ երկրի անփորձ քայլերը, հարևան երկրների ռազմական հարձակումների դիմագրավումը ներկայացնող հրապարակումներով, ապա 1920 թ. «Ճակատամարտը» նաև արձանագրում էր որոշակի հաջողություններ տարբեր ոլորտներում: Այդ բովանդակությամբ նյութերն ամփոփվում էին «Կյանքը Հայաստանի մեջ», «Լուրեր Հայաստանեն», «Կացությունը Հայաստանի մեջ», «Վերջին ժամ», «Արձագանք Հայաստանեն», «Արարատյան սուրհանդակ» խորագրերի ներքո:

Հայաստանի Առաջին Հանրապետության հաջողությունների արձանագրումը «Ճակատամարտի» հրապարակումներում

1920 թ. «Ճակատամարտը» ներկայացնում էր Հայաստանի սոցիալ-տնտեսական կյանքի տարբեր ոլորտներում կատարված դրական տեղաշարժերը և դրանց հետևանքով մարդկանց կենցաղում գրանցված աստիճանական փոփո-

խությունները: Մարտի 9-ին թերթում «Արձագանք Հայաստաննեն» խորագի ներքո զետեղված լուրերը վկայում էին երկրի տնտեսական ակտիվացող կյանքի մասին: Այդ տեղեկատվության համաձայն՝ Ելմտական նախարարությունը տրանզիտային պայմանագրերի հիման վրա սկսել էր մեծ քանակով տարբեր ապրանքներ ստանալ Բաթումից¹⁵: Առաքված կաշվե կոչկեղենը, էեկտրական լամպերը, լուցկին, թուղթը և այլ ապրանքները ժողովրդին էին վաճառվում հիմնականում կոռպերատիվների միջոցով¹⁶: Կառավարությունը սերմացու էր ձեռք բերում «փոխանակութեան միջոցով Պարսկաստանից և կովկասեան երկրներից»¹⁷: Սերմանման կոմիտեները սերմացուի դիմաց տալիս էին դրամ, այսուր, շաքար և օճառ¹⁸:

1920 թ. մայիսին թերթը տպագրել է Հայաստանի Առաջին Հանրապետության արդեն նախկին վարչապետ Ա. Խատիսյանի վերջին զեկույցը խորհրդարանում, որում ներկայացվել էր երկրի նաև պարենային վիճակը¹⁹: Նա նշել էր, որ պարենի պաշարները չեին բավարարում պահանջարկը, քանի որ Ռուսաստանից տևական ժամանակ այսուր չեին կարողանում ստանալ, իսկ Միացյալ Նահանգների ուղարկած այլուրով բարձված նավերն ուշանում էին: Հացի չափաբաժինն իշեցվել էր քառորդ ֆունտի²⁰: Ա.

¹⁵«Ճակատամարտ». 1920, № 398:

¹⁶«Ճակատամարտ». 1920, № 398:

¹⁷«Ճակատամարտ». 1920, № 398:

¹⁸«Ճակատամարտ». 1920, № 398:

¹⁹«Ճակատամարտ». 1920, № 460:

²⁰«Ճակատամարտ». 1920, № 460:

Խատիսյանը միևնույն ժամանակ վստահեցրել էր, որ կառավարությունն անում էր հնարավորը՝ պարենավորման ճգնաժամը հաղթահարելու համար²¹: Թերթը նաև տեղեկացնում էր, որ հանքարդյունաբերությունը զարգացնելու համար կառավարությունը դրամական մրցանակներ էր սահմանել տարբեր հանքերի տեղերն առաջինը պետությանը հայտնողների համար²², քանզի պետականացվել էին հողի մեջ գտնվող բոլոր հարստությունները²³: «Ճակատամարտը» 1920 թ. գարնանը լուրեր էր տպագրում Հայաստանում բացվող գործարանների և ձեռնարկությունների մասին²⁴:

1920 թ. հունիսի 13-ին թերթը հայտնում էր Հայաստանի տնտեսական կյանքի բարվոքմանն առնչվող 3 կարևոր լուր. ամերիկյան այլուրի առաջին մասը հասել էր Երևան, կառավարությունն «Անկախության փոխառությունը» կնքելու համար հաստատել էր Ելմտական նախարարության առաջարկած օրինագիծը, հայկական փոքր վարկային հիմնարկների միությունը կառավարությունից որպես նպաստ ստացել էր 40 միլիոն ռուբլի և գործում էր «Հայվարկ» անունով²⁵:

1920 թ. օգոստոսի մեկին Երևանում և Թիֆլիսում տեղի է ունենում «Անկախության փոխառության» ծրագրի բա-

²¹«Ճակատամարտ». 1920, № 460:

²²«Ճակատամարտ». 1920, № 426:

²³«Ճակատամարտ». 1920, № 426:

²³ «Ճակատամարտ». 1920, № 426:

²⁴«Ճակատամարտ». 1920, № 426:

²⁵«Ճակատամարտ». 1920, № 477:

ցումը: Այդ առիթով Թիֆլիսում եղած հայկական բոլոր միություններն ու կազմակերպությունները հանդես են գալիս կոչով, որը տպագրել էր «Ճակատամարտը»²⁶: «Վերջին ժամ» բաժնի լուրը ներկայացնում էր, թե որքան չերմ ու ոգևորիչ մթնոլորտում էր անցել Հայաստանի անդրանիկ փոխառության հանդիսավոր բացումը²⁷: Առաջին անձը մուտք էր արել 50.000 ռուբլի²⁸: Օգոստոսի 5-ին թերթում տպագրված թղթակցությունը ներկայացնում էր «Անկախության փոխառության» ծրագրի կենսագործման մանրամասները²⁹: «Անկախության փոխառությանը» մասնակցում էին հայկական գրեթե բոլոր գաղթօջախները: Թերթն էլ 1500 ռուբի էր հատկացրել, ինչն աշխատակիցների մեկամյա աշխատավարձի հանրագումարն էր³⁰:

«Ճակատամարտը» գրում էր, որ աշխարհաքաղաքական նպաստավոր պայմանների դեպքում Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարողանալու էր դուրս գալ սովի և համաճարակների, աղքատության ու անգրագիտության ճիրաններից: Թերթն այս կապակցությամբ տպագրում էր վերլուծականներ և ոլորտին քաջատեղյակ մասնագետների առաջարկները պարունակող գիտական հոդվածներ: Կատարում էր արտատպություններ հիշյալ թեմաներով: Ուշագրավ է 1920 թ. պարբերականում արտատպված երկմասանի այն հոդվածը, որի հեղինակ Գրի-

²⁶«Ճակատամարտ». 1920, № 524:

²⁷«Ճակատամարտ». 1920, № 524:

²⁸«Ճակատամարտ». 1920, № 524:

²⁹«Ճակատամարտ». 1920, № 520:

³⁰«Ճակատամարտ». 1920, № 541:

գոր Աղաբարյանը հանգամանորեն ներկայացնում էր Երկրի տնտեսական առաջընթացին անհրաժեշտ իրական ճանապարհները³¹: Նրա պնդմամբ՝ Երկրի տնտեսական անկախության հիմքը կազմող արդյունաբերությունը և հանքային պաշարների հարստություններն անդամալուծվել էին թուրքերի, թաթարների և վրացիների կողմից՝ դեպի ծով Ելքի վրա արգելք կամ հսկողություն դնելու հետևանքով³²: Նա առաջարկում էր այս տնտեսական շրջափակման թնջուկը լուծել՝ Հայաստանին տրամադրելով ազատ տրանզիտ Անդրկովկասյան Երկաթուղով, որն իրար էր կապում Բաքումն ու Բաքուն՝ Սև և Կասպից ծովերի միջև³³: Առաջարկում էր նաև կառուցել ու միջազգայնացնել մի նոր՝ Անդրհայկական Երկաթուղի³⁴: Այն «կարճ գիծով մը ծովուն պիտի կապէր Երկրին ճարտարարութաստական, Երկրագործական և հանքային հարստութիւնները, միեւնոյն ատեն այս գիծը թրանզիթի օրուառ միջոց մը պիտի ըլլայ Պարկաստանի և Պաքուի արտադրութեանց համար, պիտի հասնի Սև և Կասպից ծովերուն»³⁵: Հոդվածագրի կարծիքով՝ այս Երկաթուղին կառուցվելուց հետո կարող էր դառնալ Հայաստանի Հանրապետության անկախության կենսական Երաշխավորը³⁶:

³¹«Ճակատամարտ» . 1920, №№ 503, 504:

³²«Ճակատամարտ» . 1920, № 503:

³³«Ճակատամարտ» . 1920, № 503:

³⁴«Ճակատամարտ» . 1920, № 503:

³⁵«Ճակատամարտ» . 1920, № 503:

³⁶«Ճակատամարտ» . 1920, № 503:

Եզրակացություններ

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել հետևյալը. «Ճակատամարտը» հիմնականում անաչառ է անդրադարձել Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական հիմնախնդիրներին, բայց կառավարության աշխատանքում նկատվող բացերին ու թերություններին ներողամտորեն է մոտեցել, ինչը պայմանավորված էր խմբագրակազմի կուսակցական դիրորշումներով³⁷: Թերթը վստահ էր, որ աշխարհաքաղաքական բարենպաստ հանգամանքների դեպքում Հայաստանի Առաջին Հանրապետությունը կարողանալու էր հաղթահարել սոցիալ-տնտեսական դժվարությունները, ինչին թերթը փորձում էր օգտակար լինել իր վերլուծական և գիտատեղեկատվական հոդվածների միջոցով: Պարբերականը Հայաստանի կայացման գործում մեծ տեղ էր հատկացնում համահայկական աջակցության ծրագրերին և, մասնավորապես, «Անկախության փոխառություն» ծրագրին:

Գրականություն/References/Литература

1. **Գալստյան Ս.** 2023, Հայաստանի Առաջին Հանրապետության սոցիալ-տնտեսական դրությունը 1918–1920 թվականներին (ըստ ՀՊՁ-ի նյութերի), Երևան, Հայաստանի պատմության թանգարանի հրատ., 269 էշ:

³⁷Հակոբյան. 2005:

- Galstyan S.** 2023, The Socio-Economic Situation of the First Republic of Armenia (1918–1920) (Based on History Museum of Armenia Materials). Yerevan, History Museum of Armenia Publishing, 269 p.
2. Թուրքիայի Հանրապետության պատմություն 2014, Երևան, ԵՊՀ հրատ., 396 էջ:
History of the Republic of Turkey 2014, Yerevan, YSU Publishing, 396 p.
3. **Խառատյան Ա.** 2015, Արևմտահայ մամուլն իր պատմության ավարտին (1900-1922), Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 534 էջ:
Kharatyian A. 2015, The Western Armenian Press at the End of Its History (1900-1922). Yerevan, Publication of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 534 p.
4. Կրթամշակութային կյանքը Հայաստանի Առաջին Հանրապետության տարիներին (գիտաժողովի նյութեր) 2018, Երևան, Համազգային հայ կրթական և մշակութային միության հրատ., 279 էջ:
Proceedings of the Conference Educational and Cultural Life During the Years of the First Republic of Armenia 2018, Yerevan, Hamazkayin Armenian Educational and Cultural Association Publishing, 279 p.
5. **Հակոբյան Ա.** 2005, Հայաստանի Հանրապետության պարբերական մամուլի պատմություն 1918-1920 թթ., Երևան, 64 էջ:
Hakobyan A. 2005, History of the Periodical Press of the Republic of Armenia (1918-1920), Yerevan, 64 p.
6. Հայաստանի Հանրապետության պառլամենտի օրենքները (1918-1920 թթ.) 1998, Երևան, Ազգային

ժողովի հրատ., 506 էջ:

Laws of the Parliament of the Republic of Armenia (1918-1920) 1998, Yerevan, National Assembly Publishing, 506 p.

7. **Հովսեփյան Մ.** 2009, ՀՅԴ Կ.Պոլսի պարբերական մամուլը (1909-1924 թթ.), Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 194 էջ:
Hovsepyan M. 2009, The Armenian Revolutionary Federation Dashnakcutyun (ARFD) Press in Constantinople (1909-1924), Yerevan, Publication of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 194 p.
8. **Հովսեփյան Մ.** 2020, Հայ գաղթականների և որբերի հիմնախնդիրները Կ. Պոլսի «Ճակատամարտ» օրաթերթում (1918-1923 թթ.), Երևան, ԳԱԱ Պատմության ինստիտուտի հրատ., 192 էջ:
Hovsepyan M. 2020, The Issues of Armenian Refugees and Orphans in the "Chakatamart" Daily Newspaper (1918-1923), Yerevan, Publication of the Institute of History of the National Academy of Sciences of the Republic of Armenia, 192 p.
9. «Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1919, №№ 84, 110, 120, 193:
Newspaper "Chakatamart Daily", Constantinople, 1919, №№ 84, 110, 120, 193.
10. «Ճակատամարտ» օրաթերթ, Կ. Պոլիս, 1920, №№ 398, 426, 460, 477, 503, 504, 520, 524, 541:
Newspaper "Chakatamart Daily", Constantinople, 1920, №№ 398, 426, 460, 477, 503, 504, 520, 524, 541.
11. **Պետրոսյան Գ.** 2003, Հայաստանի Հանրապետու-

թյան ներքին և արտաքին քաղաքական կացությունը հանրապետության գոյության առաջին շրջանում (1918 թ. հունիս – նոյեմբեր), «Հայոց պատմության հարցեր», № 4, Երևան, ԳԱԱ «Գիտություն» հրատ., էջ 105-117):

Petrosyan G. 2003, The Internal and External Political Situation of the Republic of Armenia During Its Initial Period of Existence (June–November 1918), Questions of Armenian History, vol. 4. Yerevan, NAS "Gitutyun" Publishing, pp. 105-117.

**Мариам В. Овсепян, Институт истории НАН РА, к.ф.н.,
Отражение социально-экономических проблем Первой
Республики Армении в газете "Чакатамарт" (1918–1920)**

Резюме

Первая Республика Армения столкнулась с многочисленными проблемами. Голод, эпидемии, болезни, бедность и наличие беженцев усугубляли геополитические сложности, угрожавшие выживанию новообразованного государства. Решение экономических проблем требовало дипломатического и практического взаимодействия с соседними странами, которые зачастую были настроены недружелюбно или даже враждебно по отношению к Армении. Государственное строительство приходилось начинать с нуля, что делало неизбежными ошибки и недочеты. Несмотря на трудности, которые часто считались непреодолимыми, правительству Первой Республики Армения (1918–1920) удалось добиться успехов практически во всех областях, особенно в социально-экономической сфере. Этот непростой путь нашел отражение не только на страницах республиканской прессы, но и в армянских периодических изданиях, выходивших в Константинополе, в том

числе в ежедневной газете "Чакатамарт". Эта газета отличалась объективным и беспристрастным подходом к освещению и анализу деятельности руководителей республики. В целом, снисходительное отношение сотрудников к замеченным недостаткам и ошибкам объяснялось их стремлением сохранить армянскую государственность. Редакция верила, что при благоприятной политической обстановке в регионе руководители Армении в конечном итоге смогут найти решения как внутренних, так и внешних проблем.

Ключевые слова: Мудросское перемирие, Армянский вопрос, армянская периодика в Константинополе, Первая Республика Армения, ежедневная газета «Чакатамарт», социально-экономические проблемы, заем Независимости, Трансармянская железная дорога.

Mariam V. Hovsepyan, Institute of History of the NAS RA, Ph.D in Philology, Reflections on the Socio-Economic Issues of the First Republic of Armenia in the "Chakatamart" Newspaper (1918-1920)

Summary

The First Republic of Armenia faced numerous challenges. Hunger, epidemics, diseases, poverty, and the presence of refugees compounded the geopolitical complexities threatening the survival of the newly established state. Addressing economic problems required diplomatic and practical engagement with neighboring countries, which were often unfriendly or even hostile toward Armenia. State-building had to start from scratch, making mistakes and shortcomings inevitable. Despite encountering difficulties that were often deemed insurmountable, the government of the First Republic of Armenia (1918–1920) managed to achieve success in nearly all fields,

particularly in the socio-economic sector. This challenging path was reflected not only in the pages of the republican press but also in Armenian periodicals published in Constantinople, including the *Chakatamart* daily newspaper. This newspaper stood out for its objective and impartial approach in presenting and analyzing the work of the republic's leaders. The staff's generally lenient attitude toward the observed shortcomings and mistakes was driven by their desire to preserve Armenian statehood. The editorial team believed that, given favorable political conditions in the region, Armenia's leaders would eventually be able to find solutions to both internal and external challenges.

Key words: Mudros Armistice, Armenian Question, Constantinople-Armenian periodicals, First Republic of Armenia, *Chakatamart* daily newspaper, socio-economic issues, Independence Loan, Trans-Armenian Railroad.

ՌՈՒԲԵՆ Լ. ԱԶԻՑԲԵԿՅԱՆ

ԳԱԱ պատմության ինստիտուտ, պ. գ. թ., ղոցենք
r. azizbekyan@mail.ru

ID 0009-0004-4095-0809

DOI:10.59523/1829-4596.2025.1(30)-127

ՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ ՄՏՔԻ ԵՎՈԼՅՈՒՑԻԱՆ (1988-1991)*

Ամփոփում

Հայ հասարական-քաղաքական մտքի զարգացման հիշարժան պատմակիովերից է 1980-ականների երկրորդ կեսից 1990-ականների սկիզբն ընկած ժամանակահատվածը, երբ ԽՍՀՄ-ում 1985 թ. «Վերակառուցման» քաղաքականության հոչակումը հանգեցրեց արցախահայության աղբեջանական լծի թոթափմանը նպատակառուղղված շարժման ծավալմանը: «Վերակառուցման» առաջին տարիներին ԽՍՀՄ-ում զարգացող գործընթացները Հայաստանում հիմնականում դրսևորվեցին հանրապետությունում ստեղծված բնապահպանական ծանր վիճակի բարելավմանը նպատակառուղղված ժողովրդական շարժման սկզբնավորմամբ: Սակայն, երբ սկսվեց ինքնորոշման իր իրավունքի ճանաչմանը միտված արցախահայության ազ-

* Ներկայացվել է 23.I.2025 թ., գրախոսվել է 25.I.2025 թ., ընդունվել է դպրագրության 20.VI.2025 թ.:

գային-ազատագրական պայքարի նոր փուլը, Հայաստանում ծավալվող ժողովրդական շարժման գլխավոր նպատակը դարձավ Ղարաբաղյան խնդրի արդարացի լուծմանը հասնելը, ինչը հայ ժողովրդի ազգային ծգտումներից էր: Ուստի, պատահական չէր, որ Արցախյան շարժումը մեծապես խթանեց հայ հասարակական-քաղաքական մտքի զարգացումը՝ աստիճանաբար նոր որակներ հաղորդելով նրան: Դա հանգեցրեց ազգային-ժողովրդավարական գործնքացների խորացմանն ու ազգային քաղաքական նպատակների առաջադրմանը, ինչն իր հերթին նպաստեց Հայաստանի սոցիալ-տնտեսական և հասարակական-քաղաքական կյանքի արմատական և շրջադարձային փոփոխություններին: Վերջիններս հնարավորություն ընձեռեցին ձեռնամուխ լինելու հայկական երկու անկախ պետությունների՝ Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հարապետության հոչակմանը, ինչով հայ ժողովրդի կյանքում պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբը դրվեց:

Բանալի բառեր՝ հայ հասարակական-քաղաքական միտք, վերակառուցում, Արցախյան շարժում, Հայաստան, Լեռնային Ղարաբաղ, ազգային-ազատագրական պայքար, ազգային-ժողովրդավարական արժեքներ, անկախ պետականություն:

Ներածություն

Հայոց պատմության գրեթե բոլոր փուլերում հայ հասարակական-քաղաքական միտքը կարևոր դեր է խաղացել

մեր ժողովրդի քաղաքական, հասարակական, տնտեսական և հոգևոր-մշակութային կյանքում՝ նպաստելով վերջիններիս առաջընթացին։ Որպես կանոն, հայ հասակական-քաղաքական միտքը հիմնականում զարգացել է հատկապես հայ ժողովրդի համար բախտորոշ պատմական ժամանակաշրջաններում։ Այս առումով բացառություն չէր նաև 1988-1991 թթ. ժամանակահատվածը, որի ընթացքում ծավալված Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժումը հսկայական նշանակություն ունեցավ հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացի համար։ Վերջինս արտահայտվեց հայ ժողովրդի համախմբմամբ, դեպի ժողովրդավարություն կողմնորոշմամբ, ազգային արժեքների վերագնահատմամբ, օտարների հովանավորության պատրանքի թոթակիմամբ, իր ուժերին ապավինելու և սեփական ճակատագիրը տնօրինելու վճռականությամբ։ Դրանք հայոց ազգային երկու անկախ պետությունների հոչակման ամուր հենք դարձան։

Հայ հասարակական-քաղաքական մտքի բարեշրջական գործընթացի սկիզբը

1980-ականների երկրորդ կեսին և 1990-ականների սկզբին հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացը պայմանավորված էր արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլով։ Վերջինս ԽՍՀՄ-ում իշխանության եկած նոր դեկավարության կողմից 1985 թ. ապրիլին հոչակված արմատական փոփոխություններ ենթադրող վերակառուցման քաղաքականության հետևանք

Էր¹: Այն, ի տարբերություն նախորդ ժամանակաշրջանների ընթացքում մղված պայքարի, աչքի էր ընկնում բացահայտությամբ և ինքնորոշման սեփական իրավունքը մինչև վերջ պաշտպանելու վճռականությամբ:

Տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզում (ԼՂԻՄ) Ադրբեջանի իշխանությունները կանխամտածված իրականացնում էին հակահայկական քաղաքականություն, որը նպատակամիտված էր մարզը լրիվ հայթափելուն ու ադրբեջանցիներով վերաբնակեցնելուն²: Հակահայկական քաղաքականության թիրախ էին դառնում նույնիսկ Արցախի պատմական հուշարձանները, որոնք հետևողականորեն ավերվում և ոչնչացվում էին կամ էլ ներկայացվում որպես «կովկասյան ալբանացիների նյութական

¹ Материалы Пленума Центрального Комитета КПСС. 1985.

²Վերջին տարիներին Այսրկովկասում լուրջ աշխարհաքաղաքական գործընթացների ծավալման հետևանքով տարածաշրջանում թուրքիայի ազդեցության զգայի աճով պայմանավորված ռուսա-թուրքական հարաբերությունների սերտացումը, որը զուգորդվում էր ռուս-ադրբեջանական ռազմատնտեսական համագործակցության էլ ավելի խորացմամբ, Բաքվի համար Արցախի վերջնական հայաթափման նպաստավոր պայմաններ ստեղծեց: Արդյունքում Անկարայի ռազմատեխնիկական աջակցությամբ և Մոսկվայի թողտվությամբ՝ 2020-2023 թթ. ընթացքում Ադրբեջանի լայնամասշտաբան ռազմական ագրեսիայի հետևանքով 2023 թ. սեպտեմբերին Լեռնային Ղարաբաղի ավելի քան հարյուր հազար հայությունը հարկադրաբար լքեց իր հայենի բնօրրանը և երկրամասն ամբողջովին հայտնվեց ադրբեջանական վերահսկողության ներքո:

մշակույթ»³: Դրանով իսկ Բաքուն փորձում էր ջնջել հայկական մշակույթի հետքերը, որպեսզի հիմնավորի արցախահայության ոչ տեղաբնիկ լինելու վերաբերյալ իր մոգոնած հակագիտական ստահոդ տեսությունը⁴:

«Վերակառուցման» քաղաքականության հոչակումն արցախահայությանը նոր հիսյսեր ներշնչեց: Սակայն մասնակի և ոչ արմատական բարենորոգումները հանգեցրին ճգնաժամային վիճակը խորացնող նոր, բարդ ու հակասական գործոնթացների: Արվեցին հակասությունները կենտրոնի և միութենական հանրապետությունների, ինչպես նաև վերջիններիս միջև: Զանգվածային դարձան ազգամիջյան առճակատումները, որոնք ուղեկցվում էին մարդկային բազմաթիվ գրիերով: Նոյնիսկ «Վերևից» սահմանված չափավոր ժողովրդավարության ու հրապարակայնության ծավալման պայմաններում ԽՍՀՄ-ում բնակվող բազմաթիվ ազգերն ամբողջ ձայնով հայտարարեցին իրենց հիմնախնդիրների մասին, ինչն էլ դարձավ 1991 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ փլուզման հիմնական գործոններից մեկը⁵:

Հայաստանի համար 1980-ականների երկրորդ կեսը հատկապես բարդ ու դրամատիկ ժամանակաշրջան էր: ԽՍՀՄ-ի տնտեսության հասարակական-քաղաքական

³ 2023 թ. սեպտեմբերից հետո Ադրբեյջանն Արցախում նոր թափով ձեռնամուխ եղավ հայկական մշակութային ժառանգության օբյեկտների արագացված ոչնչացմանը, ինչը միջազգային գիտական շրջանակների մի շարք առաջատար ներկայացուցիչներ որակեցին որպես «մշակութային ցեղասպանություն»:

⁴ Ազիզբեկյան. 2005, 43-44:

⁵ Հայոց պատմություն, հատոր IV, գիրք Երկրորդ. 2016, 150-152:

կյանքի ճգնաժամի հետևանքներն ակնառու դրսնորվում էին նաև հանրապետությունում: Եղած դժվարություններին գումարվեցին նաև Լեռնային Ղարաբաղի հիմնախնդիրը, ավերիչ երկրաշարժի ծանր հետևանքները, շրջափակումները, բազմահազար փախստականների առկայությունը: Միաժամանակ աննախադեպ սրվել էին բնապահպանական խնդիրները, ինչը բացասաբար էր անդրադառնում ազգաբնակչության առողջության վրա և լրջորեն սպառնում ոչնչացնել կենսական նշանակություն ունեցող բնական հարստությունները: Դրանից ենելով, հանրապետության բնակչության մեծ մասն արտահայտելով իր դժգոհությունն առկա իրավիճակից, տեղական իշխանություններից պահանջում էր այլ խնդիրների հետ մեկտեղ հատկապես հրատապ լրիժում տալ բնապահպանական խնդիրներին: Այդ ընդգումները 1987-1988 թթ. աստիճանաբար վերաճեցին զանգվածային հանրահավաքների, որոնց բավականին հոծ բազմություն էր մասնակցում⁶: Հանրահավաքների մասնակիցները հանրապետության կառավարությունից պահանջում էին փակել կամ վերամասնագիտացնել տեխնոլոգիական վնասակար արտադրությունները, ինչի վերաբերյալ ստորագրություններ էին հավաքում: Նման ձեռնարկությունների դարպանների մոտ կազմակերպվում էին նաև ցուցեր ու պիկետներ⁷: Բնապահպանական խնդիրների լրիժմանը նպատակառուղղված շարժումը հետզիետե ավելի էր ծավալ-

⁶ Ազիգբեկյան. 2004, 149-151:

⁷ Կապուտիկյան. 1997, 250-251; Սարգսյան. 2001, 134-136; Մովսիսյան. 2001, 133-134:

վում: Բայց, երբ Արցախի հայությունը, առաջնորդվելով «ժողովրդավարություն» և «հրապարակայնություն» կարգախոսներով, արտահայտեց ինքնորոշման իր իրավունքը, ծավալվող շարժման գլխավոր նպատակը դարձավ Ղարաբաղյան հիմնախնդրի արդարացի լուծման հասնելը: Հայ ժողովրդին առաջիններից մեկը հավատալով կոմունիստական կայսրությունում «վերևից» հոչակված թվացյալ «ժողովրդավարությանը», փորձեց իրականացնել իր ազգային ծգտումներից մեկը: Այն իրավաքարաքական ձևակերպում ստացավ՝ ԽՍՀՄ Սահմանադրությանը համապատասխան ԼՂԻՄ-ը Ադրբեյջանի կազմից դուրս բերելու և ՀԽՍՀ կազմի մեջ ընդգրկելու մասին ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման մարզխորհրդի 1988 թ. փետրվարի 20-ի պատմական որոշմամբ⁸: Ի պաշտպանություն վերջինիս Ստեփանակերտում «միացում» կարգախոսով բազմամարդ հանրահավաքներ սկսվեցին:

Փետրվարի 21-ից Հայաստանում արցախահայության հետ համերաշխության զանգվածային ելույթների մեջ այլք սկսվեց: Ողջ հայ ժողովրդը միահամուռ և վճռականորեն սատար կանգնեց Արցախի իր հայունակիցների արդար պայքարին՝ միութենական իշխանություններից պահանջելով արդարացիորեն լուծել այդ հիմնախնդիրը: Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում տեղի ունեցան հարյուր հազարանոց հանրահավաքներ, ցուցեր և երթեր: Արցախյան շարժման ծավալման հենց սկզբից հայ ժողովրդն աչքի

⁸ «Սովետական Ղարաբաղ». 1988, 21 փետրվարի:

ընկավ իր համախմբվածությամբ և միասնականությամբ, ինչը նպաստեց հայ հասարակական-քաղաքական մտքի կոնսոլիդացմանն ու բարեշրջական գործընթացի աստիճանական ծավալմանը:

Ազգային-ժողովրդավարական արժեքների արմատավորումը լայն հանրության շրջանում՝ որպես հայ հասարակական-քաղաքական մտքի առաջընթացի դրսնորում

Կենտրոնն ի սկզբանե Արցախյան շարժման նկատմամբ խիստ բացասական դիրք գրավեց, քանի որ երկրի ներսում ազգերի ինքնորոշման իրավունքի իրականացումը լրից վտանգ էր սպառնում կոմունիստական կայսրության համապարփակ տիրապետությանը:

Այդ ֆոնի վրա լիովին բացահայտվեց Հայաստանի իշխանությունների կտրվածությունը ժողովրդական զանգվածներից: Հանրապետության ղեկավարության գրաված դիրքի անորոշությունը, երկչուսությունը հանգեցրին կուսակցական ու կառավարական մարմինների ինքնամեկուսացմանն ու հեղինակագրկմանը: Ուստի ժողովուրդն ընտրեց հիմնականում մտավորականներից բարկացած կազմկոմիտե, որը շարժմանը տվեց կազմակերպված բնույթ: Նա կազմակերպում և ղեկավարում էր բազմահազարանոց ցուցերն ու հանրահավաքները, որոնց ընթացքում ժողովրդի հետ քննարկում էր շարժման խնդիրներին ու անելիքներին առնչվող հարցեր և ժողովրդի հավանությամբ կայացնում որոշումներ՝ ձեռնամուխ լինելով դրանց իրագործմանը:

Փաստորեն շարժման մեջ աստիճանաբար արմատավորվում էին ժողովրդավարությանը բնորոշ տարրեր:

Ղարաբաղյան շարժումը խորհրդային Հայաստանում և Արցախում համադրելու նպատակով Երևանում առաջին հանրահավաքների կազմակերպիչներից մեկի՝ Իգոր Մուրադյանի (ով նաև կազմկոմիտեի անդամ էր) նախաձեռնությամբ 1988 թ. փետրվարի վերջին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն: Հանրապետության գրեթե բոլոր քաղաքներում, շրջաններում, հիմնարկ-ձեռնարկություններում և ուսումնական հաստատություններում սկսեցին ստեղծվել «Ղարաբաղ» կոմիտեներ, ինչը և շարժմանը կազմակերպչական նոր ծև տվեց: Այս կառույցների ստեղծումը հայ հասրակական-քաղաքական մտքի առաջընթացի արտահայտություններից էր:

Համոզվելով, որ քաղաքական մեթոդներով չի հաջողվում կասեցնել Արցախյան շարժումը, ադրբեջանական իշխանությունները, ԽՍՀՄ կենտրոնական մարմինների թողտվությամբ, ԼՂԻՄ-ում և Հայաստանում ծավալված խաղաղ հանրահավաքներին ու ցուցերին հակադրեցին բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը:

Փետրվարի 27-29-ին Սումգայիթում պաշտոնական Բաթվի կողմից պետական մակարդակով կազմակերպվեց տեղի հայ բնակչության կոտորած, որն ուղեկցվում էր հայերի դաժան սպանություններով, խոշտանգումներով, բռնաբարություններով, համատարած կողոպուտով ու զանգվա-

ծային տեղահանությամբ⁹: Փաստորեն իրականացվում էր հայ ազգաբնակչության ցեղասպանություն:

Սումգայիթում իրականացված հայերի սպանդը չարժանացավ համարժեք քաղաքական ու իրավական գնահատականի և, ըստ Էռլիթյան, XX դ. Վերջերի այդ եղեռնի կազմակերպիչներն ու իրագործողներն անպատճ մնացին: Դրանով սումգայիթյան ջարդերն ադրբեջանաբնակ հայերի նկատմամբ հալածանքների ու բռնի տեղահանման նոր ալիքների ազդակ հանդիսացան: Ադրբեջանում հակահյկական քարոզության և տիրող անպատճելիության մթնոլորտում 1988 թ. գարնանից 1990 թ. ավելի լայն ծավալներ ստացան հայերի նկատմամբ բռնությունները: Լուրջ սպառնալիքի տակ դրվեց տեղի հայ ազգաբնակչության ֆիզիկական գոյությունը: Կիրովաբարից (այժմ Գյանջա), Մինգեշաուրից, Շամիսորից, Խանլարից, Դաշքեսանից, Բաքվից և հայաշատ այլ վայրերից հայ բնակչությունը զանգվածաբար արտաքսվեց: Ընդ որում՝ բռնի տեղահանումն ամենուր ուղեկցվում էր սպանություններով, խոշտանգումներով և ունեցվածքի թալանով:

Սակայն այս ամենը չընկճեց հայ ժողովրդին, ընդհակառակը՝ նրան ավելի համախմբեց: ԼՂԻՄ-ում և Հայաստանում նոր թափով վերսկսվեցին բողոքի բազմահազարնոց ցուցերը: Հայ ժողովուրդը ԽՍՀՄ ղեկավարությունից պահանջում էր Արցախի հիմնահարցի արդարացի լուծում, սումգայիթյան եղեռնագործների պատճ, կատարվա-

⁹ Սլուբաբյան, Զօլյան, Արշակյան. 1989, 20; Բաբանով, Յօվովուսկի. 1992, 9-10.

ծի քաղաքական գնահատական: Թեև կենտրոնն անդրդվելի էր, ժողովրդի ճնշման ներքո 1988 թ. հունիսի 15-ին ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանն ընդառաջ գնալով ԼՂԻՄ-ի մարզխորհրդի դիմումին՝ համաձայնություն տվեց մարզը Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտնելուն և այդ հարցը քննելու ու դրականորեն լուծելու խնդրանքով դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Միաժամանակ, հանրապետության խորհրդարանը Սումգայիթում կատարված ոճրագործությունները դատապարտող որոշում ընդունեց¹⁰: Սակայն միութենական բարձրագույն մարմինը՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունը, մերժեց Հայաստանի Գերագույն խորհրդի վերոնշյալ խնդրանքը¹¹:

Այսպիսով, Ղարաբաղը և Հայաստանը ԽՍՀՄ-ում դարձան այն տարածքները, որտեղ, առաջին անգամ, խորհրդային իշխանության տեղական բարձրագույն մարմինները (Լեռնային Ղարաբաղի մարզային և Հայաստանի Գերագույն խորհուրդները) որոշումներ ընդունեցին ներքևից՝ ժողովրդի կամքով և ոչ թե վերևից իշեցված հրահանգներով: Շարժման ողջ ընթացքում այդ խորհուրդների կայացած գրեթե բոլոր որոշումները ժողովրդի կամքի արտահայտությունն էին: Դրանք 1915 թ. ցեղասպանությունը դատապարտելու, 1918 թ. մայիսի 28-ը որպես հայկական պետականության վերականգնման օր և Հայաստանի Հանրապետության եռագույն դրոշը որպես ազգային խորհրդանշի ճանաչելու, հայ գինակոչիկների Հայաստանում ծառայութ-

¹⁰ «Սովետական Հայաստան». 1988, 16 հունիսի:

¹¹ «Սովետական Հայաստան». 1988, 20 հուլիսի:

յան մասին էին և այլն¹²: Այս ամենը քաղաքական առումով թերևս Հայաստանի ժողովրդավարական շարժման նշանակալից նվաճումներից էր, ինչը, անշուշտ, հայ-հասարակական քաղաքական մտքի զարգացման արգասիքն էր: Վերջինիս դրսնորումներից էր նաև՝ 1988 թ. մայիսին համագգային շարժման դեկավարուամբ ստանձնած Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի կողմից շարժման գաղափարախոսության աստիճանական փոփոխուամը: Եթե սկզբնական շրջանում Արցախյան շարժումն ուներ զուտ ազգային բնույթ, ուղղված չէր կոմունիստական վարչակարգի դեմ և Ղարաբաղի հայության ինքնորոշման իրավունքի կենսագործումն իրագործելի էր թվում ԽՍՀՄ օրենսդրության շրջանակներում, ապա իրադարձությունների հետագա զարգացման թելարրանքով այն դրւս բերվեց պատմական իրավունքի և պահանջատիրական հարթությունից՝ դառնալով ժողովրդավարության մաս կազմող ինքնորոշման իրավունքի քաղաքական հարց: Դրան զուգընթաց՝ օրակարգում դրվեցին ամենալայն ժողովրդավարական խնդիրներ՝ առաջին տեղում պահելով Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծուամը¹³: Այսպիսով՝ Արցախյան շարժումն աստիճանաբար ազգայինից վերածվեց ազգային-ժողովրդավարականի:

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած ահավոր երկրաշարժն անգամ հայ ժողովրդին հետ չկանգնեցրեց Արցախյան շարժումից: Սակայն ԽՍՀՄ դե-

¹² Ազիզբեկյան. 1992, 27-28:

¹³ Սարգսյան. 2015, 16-17:

կավար Մ. Գորբաչովը ոչ միայն դատապարտեց Արցախ-յան շարժումը, այլև նրա թողտվությամբ 1988 թ. դեկտեմբեր և 1989 թ. հունվար ամիսներին ձերբակալվեցին ու բանտարկվեցին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի բոլոր տասնմեկ անդամներն ու շարժման մի քանի այլ ակտիվիստներ: Բայց համաժողովրդական շարժումը չթուացավ: Չնայած գործող հատուկ դրությանն ու պարետային ժամին՝ Հայաստանում նոր թափով շարունակվեցին բողոքի բազմահազարանոց ցույցերն ու հանրահավաքները, գործադրվերը, հացադրվերն ու նստացույցերը: Միութենական իշխանություններից ժողովուրդը պահանջում էր ազատ արձակել Ղարաբաղյան շարժման ղեկավարներին և օրինականության ու ճշմարտության սահմաններում լուծել Արցախի խնդիրը: 1989 թ. ապրիլ-մայիսին Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի անդամներն ազատ արձակվեցին և վերստին ստանձնեցին ժողովրդական շարժման ղեկավարումը: Նկատի առնելով ժողովրդական զանգվածների քաղաքական մեծ ակտիվությունը՝ կոմիտեն ընդլայնեց շարժման ծրագիրը՝ ընդգրկելով հայ ժողովրդին հուզող մի շարք կարևոր խնդիրներ: Դրանք էին՝ հանրապետության ինքնիշխանության խորացումը (հետագայում նաև անկախ պետականության հաստատումը), քաղաքական ու տնտեսական կառուցվածքների համակարգային փոփոխությունները, ժողովրդավարության հաստատումը, կենսուլուրի բարելավումը, պատմական անցյալի վերագնահատումը, հայոց լեզվի ու հայկական դպրոցների զարգացումը և այլն: Ղարաբաղի հարցի հետ մեկտեղ հիմնականում այդ

խնդիրների իրագործմանն էր ուղղված Հայոց համագգային շարժում (ՀՀԾ) կազմակերպության գործունեությունը, որի հիմնադիր համագումարը տեղի ունեցավ 1989 թ. նոյեմբերին: ՀՀԾ-ն փաստորեն իր վրա վերցրեց ժողովրդական լայն զանգվածների շարժումը գիշավորելու, հասարակության մեջ արմատավորված կոմունիստական կարծրացած գաղափարախոսության կապանքներից ազատվելու, տարածված ավանդական պատկերացումները հաղթահարելու, իին վարչակարգը տապալելու և անկախ հանրապետություն ստեղծելու կազմակերպական աշխատանքների իրականացումը¹⁴:

Վերոնշյալը վկայում էր ազգային-ժողովրդավարական արժեքների վերահմաստավորմանը նպատակամիտված հայ հասարակական-քաղաքական մտքի էվոլյուցիայի ակնբախ դրսնորման մասին, ինչը պայմանավորված էր հայ ժողովրդի ազգային զարթոնքով:

Նման զարգացումներն առկա էին նաև Լեռնային Ղարաբաղում: 1989 թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում գումարվեց ԼՂԻՄ ազգաբնակչության լիազոր ներկայացուցիչների համագումարը, որը, շեշտելով ապօրինաբար վերացված կուսակցության մարզկոմը և մարզխորհուրդն ընտրությունների միջոցով վերականգնելու անհրաժեշտությունը, որոշեց մինչ այդ մարզի կառավարումը հանձնարարել իր կողմից ընտրված ժամանակավոր բարձրագույն մարմնին՝ Ազգային խորհրդին: Այն 1989 թ. նոյեմբերի 29-ին դիմեց Հայաստանի Գերագույն խորհրդին՝ արագացնելու

¹⁴ Հայոց պատմություն, հատոր IV, գիրք Երկրորդ. 2016, 188:

մարզը մայր հայրենիքին միավորելու գործընթացը¹⁵: 1989 թ. նոյեմբերի 30-ին հրավիրվեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի արտահերթ նստաշրջան՝ Լեռնային Ղարաբաղի ազգային խորհրդի անդամների մասնակցությամբ: Դեկտեմբերի 1-ին Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդություն և Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ազգային խորհրդություն համատեղ որոշում ընդունեցին Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին¹⁶: Սակայն դա գործնականում այդպես էլ չիրականացվեց: ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությունն այն որակեց իբրև երկրի Սամանադրությանը հակասող¹⁷:

Հայ հասարակական-քաղաքական միտքը և հայոց անկախ պետականությունների հոչակումը

1990 թ. հայ հասարակական-քաղաքական միտքը հիմնականում նպատակառությունը հայ ժողովորդի երազանքի՝ անկախ պետականության վերականգնման իրագործմանը, ինչը հանգեցրեց Հայաստանի քաղաքական կյանքի արմատական և շրջադարձային փոփոխությունների: Վերջիններս սկզբնավորվեցին Հայաստանի Գերագույն խորհրդի 1990 թ. մայիսի 20-ին և հունիսի 3-ին կայացած ընտրություններով: Ավելի քան 70 տարիների ընթացքում հանրապետությունում առաջին անգամ անցկացվեցին ժողովրդավարական, այլընտրանքային ընտրություններ, որոնց մասնակցեց

¹⁵ **Ուլուքաբյան.** 1997, 125-126:

¹⁶ «Խորհրդային Հայաստան». 1989, 3 դեկտեմբերի:

¹⁷ «Խորհրդային Հայաստան». 1990, 13 հունվարի:

նաև Արցախի հայ բնակչությունը: <<Հ առաջադրած և նրա կողմից պաշտպանվող թեկնածուների ճնշող մեծամասնությունը, այդ թվում նաև Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի գրեթե բոլոր անդամներն ընտրվեցին հանրապետության Գերագույն խորհրդի կազմում¹⁸: Պատգամավոր ընտրվեցին նաև մի շարք նախկին քաղբանտարկյաներ, ինչպես նաև 11 հոգի Արցախից¹⁹: Թեև խորհրդարանում կոմունիստները թվական գերակշռություն ունեին, հիմնականում <<Հ-ական պատգամավորների ազդեցության ներքո հենց սկզբից տարանջատվեցին և չկարողացան մեծամասնություն ապահովել: Դրա հետևանքով Հայոց Համագոյային շարժումը <<Նորընտիր Գերագույն խորհրդում գերիշխող դիրք գրավեց: Արդյունքում, <<Հ ներկայացուցիչներն ու Ղարաբաղյան շարժման Հայաստանի կոմիտեի այլ անդամներ աստիճանաբար զբաղեցրին հանրապետության օրենսդիր և գործադիր մարմինների գրեթե բոլոր կարևորագույն պաշտոնները: Դրանով իսկ Հայաստանում վերջ դրվեց կոմունիստական կուակցության 70-ամյա մենատիրությանը և իշխանությունն անցավ <<Հ-ին:

Հայաստանի նորընտիր իշխանությունները ձեռնամուխ եղան անկախ պետականության կերտմանը: 1990 թ. օգոստոսի 23-ին հանրապետության Գերագույն խորհրդի առաջին նստաշրջանը հանգամանալի քննարկումներից հետո ընդունեց «Հոչակագիր Հայաստանի անկախության մասին», որով հանրապետության խորհրդարանը հոչակեց ան-

¹⁸Ազիգբեկյան. 1992, 69:

¹⁹Հայոց պատմություն, հատոր IV, գիրք Երկրորդ. 2016, 205:

կախ պետականության հաստատման գործընթացի սկիզբը²⁰: Այդ պատմական փաստաթղթի ընդունումը հայ հասարակական-քաղաքական հավաքական մտքի վերընթացի վառ դրսևորում էր:

Հոչակագրի ընդունմամբ հայ ժողովրդի կյանքում պատմական նոր ժամանակաշրջանի սկիզբը դրվեց՝ կապված հայոց անկախ պետականության հաստատման հետ: Նախևառաջ ՀՀ իշխանությունները ձեռնամուխ եղան հանրապետության տնտեսակարգի արմատական փոփոխությանը նպատակառողված լայն վերափոխումների իրականացմանը²¹: Դրան զուգընթաց քայլեր ձեռնարկվեցին նաև հասարակության ժողովրդավարացման ուղղությամբ: ՀՀ Գերագույն խորհուրդը 1990 թ. նոյեմբերի 5-ին որոշում ընդունեց հանրապետության պետական մարմինները, ձեռնարկությունները, հիմնարկները, կազմակերպությունները, ուսումնական հաստատությունները և զինվորական ստորաբաժանումները ապաքաղաքականացնելու վերաբերյալ²²: 1991 թ. փետրվարի 26-ին խորհրդարանն ընդունեց «Հասարակական-քաղաքական կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը²³, որով հանրապետությունում ստեղծվեց բազմակուսակցական համակարգ: Երկարամյա ընդմիջումից հետո հայրենիքում վերատին գործելու իրավունք ստացան ազգային ավանդական Հայ Հեղափոխական Դաշնակցութ-

²⁰ «Հայաստանի Հանրապետություն». 1991, 23 օգոստոսի:

²¹ Հայոց պատմություն, հատոր IV, գիրք Երկրորդ. 2016, 210-213:

²² «Հայաստանի Հանրապետություն». 1991, 20 հունիսի:

²³ «Հայաստանի Հանրապետություն». 1991, 20 հունիսի:

